Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

8468

1378

Թաւրիզի Ալէքսա-Թաղի „Հայկազեան“ և „Թամարեան“
երկսեռ դպրոցներ

Ուսումնական մասի

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

8476
1004

10 կոպ.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

1898 — 1901 Տարի

Տպարան Դաւրիժու Հայոց Արամեան դպրոցի

372
Բ-31
18 APR 2013
0120-10

Թաւրիզի I կ[illegible] անձամբ ներկայ խմբին չէր
„ԹԱՄԱՐԵԱՆ“ [illegible]
նախան տարւայ [illegible]

# ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

БИБЛИОТЕКА 1750

Նայելով մարդկութեան զարգացման ընթացքին՝ կարող ենք ասել, որ քաղաքակրթութեան հիմք կազմել և կազմում է ընտանիքը. սրա հետ միասին անուրանալի է այն փաստը, որ ընտանեկան ու հասարակական կեանքին բարձրացնող, առաջ մղող գլխաւոր ոյժերից՝ մինչև անգամ ամենագլխաւոր գործօններից մէկն է դպրոցը:

Ի՞նչ պայմանների մէջ և ի՞նչ չափով է կարողացել այս հիմնարկութիւնն իր պատասխանատու դերը կատարել, ահա դա է կազմում դպրոցական **ԱԿՏԻ** նպատակը:

Որպէսզի հասարակութիւնը միջոց ունենայ ամփոփ գաղափար կազմել դպրոցի մէկ տարւայ ամբողջ գործունէութեան մասին, նիւթը բաժանուած է հետևեալ մասերին.—

1.) 1898—99 ուսում. տարւայ սկիզբը.
2.) Ուսուցչական խումբը.
3.) Աշակերտ-աշակերտուհիների ընտանեկան դրութիւնը. Նրանց անհատական-առողջութեան վիճակը և ուսման մէջ ցոյց տուած յառաջադիմութեան արդիւնքը.
4.) Աննպաստ պայմաններ.
5.) Դպրոցների շինութեան առողջապահական կողմը.
և 6.) Ցանկալի դրութիւն մի առաջարկութեան հետ միասին:

## 1.) 1898-99 ուսում. տարւայ սկիզբը.

Ուսուցչական խմբից հինգ անդամներ 98 թ. Սեպտ. 3-ին [illegible] հասնելով՝ գործի դուրս անցան. հետզհետէ սրանց հետ մի-

ՀՍՍՀ — CCPA
Ա. Մյասնիկյան

50.323 0120-101

...էր։ ... բնական էր, ... հետ միասին հե-
...աքրքրուէր ... ով. ...արագործաբար գրա-
...րցում միայն ... — ... րգուհիների դասարանական —
...ագրութեան ցուցակներից դուրս (հաշուելով մի քանի հատ ու կտոր թղթեր)՝ ուրիշ ոչ մի գրաւոր փաստ չկար. մի կողմ թողնելով դպրոցների անցեալը և բերանացի վկայութիւնը, թէ Նոր-Բայազետի երկսեռ դպրոցները քիչ-շատ կանոնաւոր ընթացքի մէջ են մտած 1883 թուականից, մինչև անգամ ներկայ վարչութիւնը չգտաւ 1897—98 ուսում. տարւայ մանկավարժական նիստերի արձանագրութեան և ուսուցիչների օրական պարապմունքները առօրագրելու մատեանները։ Այս կէտը շեշտում է վարչութիւնս նրա համար, որ անկարելի է ենթադրել, թէ 83 թւից մինչև 1898—99 ուսումնական տարւայ սկիզբը դպրոցում չլինէր գոնէ ուսուցչական ժողովների արձանագրութիւն։

Ներկայ ուսուցչական խմբի համար դպրոցը պատկերանում էր անցեալ ուսումնական տարւայ գործերով անորոշ վիճակի մէջ, որ կարող էր գործը բարդել ու դժուարացնել, ահա թէ ինչու. **չկային ծնողագրերի և փոխադրութեան ցուցակներ**. աշակերտներից ոմանք իրանց վկայականները կամ կորցրած և կամ հետները չէին բերած (խօսքը վերաբերում է գիւղացիներին). դրանց բոլորին ստուգելու և դասարաններին համապատասխան տեղաւորելու համար պէտք էր՝ եթէ ոչ մեծ աշխատանք՝ գոնէ ահագին ժամանակ. այսպէս ուրեմն գործեր չլինելու պատճառով աշխատանքը կրկնապատկւեց։

Վարչութեան որոշման համաձայն նորեկների ընդունելութիւնն սկսւեց 98 թ. Սեպտեմբեր 4-ին և պէտք է վերջանար նոյն ամսի 14-ին. թէև որոշեալ ժամանակում ընդունելութիւնը ա. և բ. բաժանմունքների համար դադարած էր, բայց գ. բաժանմունքից սկսած բոլոր դասարաններում տեղ լինելու պատճառով շարունակւում էր բարձր բաժանմունքները մտնողների ընդունելութիւնը. այդ թոյլ տւեց դպրոցի վարչութիւնը նախ՝ նրա



համար, որ հաստատութիւնը դեռ անծանօթ ներկայ խմբին՝ չէր կարող ճիշտ Սեպտեմբեր 14-ին շտապել. մանաւանդ թէ յիշեալ դրագէտներից շատերը շրջակայ գիւղերից և հեռաւոր Դարագալից էին և երկրորդ՝ ուսուցչական խմբից **երեքը** դեռ ևս ճանապարհին էին։

Ընդունելութեան հետ միասին լինում էին պարապմունքներ, դա որքան հնարաւոր էր ներկայ ութ ուսուցիչների միջոցով տասն բաժանմունք զբաղեցնելու։

**Խնդրատուներ** եղել են ընդամէնը **հարիւր քսանվեց** (126), որոնցից 52 աղջիկներ և 74 տղաներ են. (**Ծանօթ.** խնդրատուներից երեքը Յունուարին են մտել դպրոց համապատասխան քննութեամբ, ինչպէս նաև ուրիշ դպրոցներում սովորութիւն է)։

Նոր ընդունւածներից մի օր դպրոց յաճախել, այլ ևս չեն եկել 6 աշակերտ և աշակերտուհի. նոր ընդունւածներից դասարաններին անհամապատասխան տարիքի պատճառով մերժւած են 38 աշակերտ և աշակերտուհի. այս 44 աշակերտ-աշակերտուհին դուրս գալով խնդրատուների ընդհանուր թւից՝ կը մնայ 82։

1898—99 ուսում. տարւայ նորեկ աշակերտ-աշակերտուհիներն ընդունւել են հետևեալ բաժանմունքներում.—

| Օրիորդաց Թամարեան դպրոց | | Տղայոց Հայկազեան դպրոց | |
|---|---|---|---|
| ա. բաժան. | 27 | ա. բաժան. | 22 |
| բ. „ | 5 | բ. „ | 10 |
| գ. „ | 2 | գ. „ | 9 |
| | | ա. դասարան | 7 |
| ընդունած | 34 | ընդունած | 48 |
| 97\|98 ուս. տ. աշկրտուհ. | 61 | 97\|98 ուս. տ. աշակերտ. | 101 |
| 98\|99 ուս. տ. սկզբում | 95 | 98\|99 ուս. տ. սկզբում | 149 |

Այսպէս „Հայկազեան" և „Թամարեան" դպրոցներում սովորող երկսեռ սաների թիւը տարւայ սկզբում եղել է 244։

Մինչև 98 թ. Սեպտեմբեր 28-ը բոլոր դասարաններում պարապում էին ինն դասատուներ՝ Տիկին Յորդանա Պուլթեան, օրիորդ Աստղիկ Տ. Յարութիւնեան, պ. պ. Յոհան Պուլթեան, Գէորգ Չիլինկիրեան, Արշակ Մեհրաբեան, Սիրաք Գրիգորեան, Մեսրոպ Քարամեան, Սեդրակ Յարութիւնեան և Տիգրան Ռաշմաճեան: Սրանցից իւրաքանչիւրը օրական հինգ դաս էր պարապում, երբեմն դասարանները միացրած ըստ յարմարութեան: Երբ Սեպտեմբեր 28-ին ժամանակաւոր դասացուցակ կազմեց, այդ օրւանից մինչև Հոկտեմբեր 3-ը դեռ տեղ չհասած դասատուների աւանդելիք առարկաներից մի քանի դաս բաց մնաց. Ճանապարհին գտնւող դասատուները Հոկտեմբեր 3-ին Թաւրիզ հասնելով նոյն ամսի 5-ից դասերը կանոնաւորապէս սկսեցին:

## 2.) ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ

Վարժուհիների և ուսուցիչների թիւը տեսչի հետ միասին տասներկու է. առարկաները բաժանուած էին 1898—99 ուսումնական տարում հետևեալ կերպով.—

| ԴԱՍԱՏՈՒՆԵՐԸ | ԱՒԱՆԴԵԼԻ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ | Շաբ. Դաս. Թ. |
|---|---|---|
| 1. պ. Սիրաք Գրիգորեան | Կրօն և Թւաբանութիւն . . | 25 |
| 2. „ Յոհան Պուլթեան | Հայրենագիտ., աշխ. և ընդ. պատմ. | 15 |
| 3. Տ. Յորդանա Պուլթեան | Ֆրանսերէն . . . | 10 |
| 4. օր. Հեղինէ Խաղեան | Ձեռագործ և Թւաբանութիւն | 12 |
| 5. պ. Արշակ Մեհրաբեան | Երգեցողութիւն և Հայոց լեզու | 24 |
| 6. „ Մարտ. Յարութիւնեան | Հայոց լեզու և Թւաբանութիւն | 26 |
| 7. „ Սեդ. Յարութիւնեան | Կրօն, Հայոց լեզու և գծագրութիւն | 25 |
| 8. „ Գէորգ Չիլինկիրեան | Հ. լեզ. Հ. պատ. ու աշխ. եկղ. պատ. | 18 |
| 9. օր. Ա. Տ. Յարութիւնեան | Գրութիւն և Գծագրութիւն . | 23 |
| 10. „ Հռիփսիմէ Փուղինեան | Ռուսաց լեզու և Թւաբանութիւն | 18 |
| 11. պ. Մեսրոպ Քարամեան | Պարսկերէն . . . | 14 |
| 12. „ Տիգրան Ռաշմաճեան | Կենդանաբ. Մրդկզմ. ու բնախօս. | 13 |
| | | 223 |

Ծանօթութիւն. օր. Հեղինէ Խաղեան՝ Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական ընկերութեան արհեստանոցի վարժուհին՝ հէնց ընկերութեան ցանկութեամբ ձրիաբար աւանդել է շաբաթական 12 դաս. իսկ օր. Հ. Փուղինեանի 18 դասից 3 դաս Ռուսաց լեզուն Գ. բաժանմունքում սկսել է մանկավարժական ժողովի որոշման համաձայն տարւայ կէսից. մի դաս էլ թւաբանութիւն Գ. դասարանում աւելացել է Յունուարից դարձեալ վարչութեան համաձայնութեամբ, որովհետև եղած դասերը համարւել են անբաւարար: Այս 18 դասը օր. Փուղինեանը աւանդում էր ձրիաբար, որի համար բարոյական պարտականութիւն է համարում վարչութիւնս իր խորին շնորհակալութիւնը յայտնել յարգելի օր-ին:



Թէև սկզբում վերակացութիւնը կատարւում էր հերթապահութեամբ, բայց դրա անյարմարութիւնն 'ի նկատի առած լաւ համարւեց մշտական վերակացուներ ունենալ:

Յարգելի պատճառով չպարապած դասերի թիւն է վաթսուն երեք (63), իսկ աւելի դասեր են պարապած տասնհինգ (15), ուրեմն ամբողջ ուսումնական տարւայ ընթացքում բաց է մնացել քառասուն և ութ (48) դաս:

Ուսուցչական խումբը ցանկանալով իր երկսեռ սաների մտաւոր պաշարն աւելացնել և նրանց մէջ առաջ բերել ընթերցասիրութիւն և որ գլխաւորն է ուղղութիւն տալ, թէ ինչպէս պէտք է վերաբերւել կարդացած գրքին, պարապելու ժամերից դուրս՝ որոշեց շաբաթ օրերը (նոյն օրը բոլոր դասերը լինում էին միմեանց յետևից կէս ժամ տևողութեամբ)՝ կէսօրից յետոյ ընթերցանութեան դասեր անել: Բարձր բաժանմունքները այդ դասին բաժանւած էին լինում երեք խմբերի՝

ա. խումբը կազմում էր օրիորդաց և տղայոց Գ. բաժանմունքները.
բ. „ „ „ ա. և բ. և „ ա. դասարանները.
և գ. „ „ Տղայոց Բ. և Գ. դասարանները.

Իւրաքանչիւր խմբի հասկացողութեան համաձայն գիրք էր ընտրւում, որը կարդում էր դասատուներից մէկը. յետոյ ունկնդիրներից մէկը համառօտ կերպով պատմում էր բովանդակութիւնը և այնուհետև աշակերտ-աշակերտուհիներն սկսում էին

պատահած տիպերը վերլուծել և հանել ամբողջ գրքի նշէայն.
այսպէս անելով՝ վերջապէս Բ. և Գ. խմբերին վերջում գիրքը միայն կարդացւում էր, իսկ աշակերտ-աշակերտուհիներից մէկը կամ միքանիսը յանձն էին առնում գրքի վերաբերմամբ գրաւոր քննադատութիւն ներկայացնել. յաջորդ շաբաթ օրը իր ընկեր—ընկերուհիների առաջ ուսուցչի ղեկավարութեամբ բացւում էր վիճաբանութիւն, թէ քննադատը որքան ճիշտ կերպով է ըմբռնել գրքի մէջ պատահած տիպերն ու նրա ամբողջ իդէան:

Ընթերցանութեան դասերը սկսել են 98 թ. Հոկտեմբեր 17-ին և դադարել են 99 թ. Մայիս 15-ին. այդ տեւակ դասեր եղել են ընդամէնը 21 և ամէն դասատուի հերթ է ընկել, բացի օր. Հ. Խուդեանից և պարսկերէնի ուսուցիչ պ. Մեսրոպ Քարամեանից:

Ուսուցչական խումբ ամբողջ տարւայ ընթացքում ունեցել է 43 մանկավարժական ժողով. նիստերին մասնակցել են բոլոր անդամները. բացակայել են շատ քիչ. միայն պ. Մ. Քարամեանը Յունւար 12-ից սկսած չէ կարողացել բոլոր նիստերին ներկայ գտնւել, բացակայելով 16 անգամ. (Գ. Չիլինկիրեան 6, Տիկին Յորդանես Պուլթեան 3, Օր. Հ. Խուդեան 1 և Ա. Մեհրաբեան 1): Յիշեալ 43 նիստից 4-ը եղել է հոգաբարձական և ուսուցչական խառն ժողով, իսկ մնացած 39-ը զուտ մանկավարժական:

Սկզբում ժողովների պարապմունքի առարկան էր նորեկ աշակերտ-աշակերտուհիների տարիքը համապատասխան դասարանների համար, դասագրքերի ընտրութիւն և առհասարակ դասաւանդման եղանակը (մեթոդիկան), որ եղել է 18 ժողով. մնացածներին եղել են մանկավարժական ու ընթացիկ խնդիրներ: Տղաներին համազգեստ անել տալու համար զբաղւել է խառն ժողովը, որ վարչութեան խիստ հսկողութեան շնորհիւ այդ բանը մտցնելով՝ կարելի է եղել պատառոտւած ու անճաշակ հագնւելուց ազատել նրանց:

Նաև դպրոցի վարչութիւնը օրիորդաց և տղայոց առաջի բաժանմունքների աշակերտ-աշակերտուհիների անհաւասար



թիւը (ձանօթ. մանկավարժական ժողովի վճռով ընդունւած էր նոյն բաժանմունքում 30 հոգուց աւել չնստացնել), մանաւանդ այն խոր անդունդն ու միմեանցից տարօրինակ խորշող բնաւորութիւնը երկսեռ սաների միջից վերացնելու նպատակով՝ լաւ համարեց պահել երկու առաջին բաժանմունք՝ միասին նստացնելով՝ 8-տարեկան աշակերտ-աշակերտուհիներին: Այս Դեկտ. ամսին նկատելով, որ տղայոց Բ. բաժանման մէջ կան միքանի չարաճճի աշակերտներ, յարմար դատեց (մանաւանդ թէ 41 հոգի էին Բ. բաժանմունքում) տասն (10) աշակերտ տեղափոխել և նստեցնել օրիորդաց Բ. բաժանմունքում. ժողովը չսխալւեց. չարաճճի աշակերտները անհամեմատ աւելի լուրջ ու կանոնաւոր ընթացք բռնեցին:

Այսպէս Լիլաւա-Թաղի երկսեռ դպրոցներում կայ հիմնական և զուգընթաց խառն երկու առաջին բաժանմունք, մի խառն Բ. բաժանմունք և մի Բ. բաժանմունք էլ միմիայն տղաների համար:

„Հայկազեան“ տղայոց դպրոցը ունի 3 բաժանմունք և 3 հիմնական դասարան (վեց տարւայ դասընթաց). յայտնի է, որ տղայոց Երրորդ դասարանը 1898/99 ուսում. տարում բացւեց շնորհիւ Հոգաբարձութեան տոկուն աշխատանքի:

„Թամարեան“ օրիորդաց դպրոցը ունի նոյնպէս 3 բաժանմունք և 2 հիմնական դասարան (հինգ տարւայ դասընթաց). միայն ցաւալի է, որ նիւթականի սղութեան պատճառով օրիորդաց Ա. և Բ. դասարանները միացած են. թէև այս բանի վնասակարութիւնը դպրոցների վարչութեան և Հոգաբարձութեան համար հասկանալի է եղել, բայց դրամական միջոցները թոյլ չեն տւել միմեանցից բաժանելու, որովհետև պէտք կը լինէր մի ուսուցիչ ևս, մինչդեռ փողի պակասութեան պատճառով հնարաւորութիւն չկար. այնպէս որ երկու դպրոցներում 10 դասարան կայ:

Ի դէպ է ասել, որ ներկայ ուսումնական տարում ուսուցչական խումբը՝ Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական ընկերութեան վարչութեան առաջարկութեան համաձայն՝ ուրախութեամբ յանձն առաւ նրա կարուձևի արհեստանոցում շաբաթական 11 դաս ձրիաբար աւանդել գլխաւոր առարկաներից (պատմութիւն,

աշխարհագրութիւն, թուաբանութիւն, մարդակազմութիւն ու բնախօսութիւն և քննական ընթերցանութիւն): Այսպիսով երկու հիմնարկութիւններն էլ խոր կերպով համոզուած էին, որ աշակերտուհիների մտաւոր հորիզոնը պիտի լայնանայ և համեմատաբար աւելի պիտի նախապատրաստէին կեանքի համար: Ինչ պատահեց, յայտնի չէ. ընկերութեան վարչութիւնը 1899 փետրուար սկզբին որպէս թէ կարուձևի ժամերը աւելացնելու նպատակով կամեցաւ աւանդւող առարկաների թւից հանել քննական ընթերցանութիւնը, որ ծանօթացնում էր նոր գրականութեան գըխաւոր ներկայացուցիչների հետ և ընթերցանելի գրքերին քննաբար վերաբերուել: Ոչ մի բան չհամոզեց ընկերութեան վարչութեանը, թէ տարւայ վերջին միտք չունի այդ տեսակ փոփոխութիւն անել և թէ դա վիրաւորական է ոչ միայն դասատու ուսուցչին, այլ ամբողջ խմբին: Ընկերութեան Վարչութիւնը պնդեց իր ասածի վրայ. Ուսուցչական խումբը ցաւօք սրտի ստիպւեց բոլորովին հրաժարուել արհեստանոցի դասերից: Ահա սա է եղել դասերի դադարելու միակ պատճառը, որ մանրամասն կարող են ապացուցանել երկու հիմնարկութիւնների մէջ կատարւած գրութիւնները:

3.) Աշակերտ-աշակերտուհիների ընտանեկան, անհատական-առողջութեան վիճակը և ուսման մէջ ցոյց տուած յառաջադիմութեան աստիճանը:

Նախ քան աշակերտ-աշակերտուհիների դրութեան մասին խօսելը՝ պիտի ասել, որ անյայտ պատճառով զանազան ժամանակներում դադարել են դպրոց յաճախելուց 10 աշակերտ և 6 աշակերտուհի: Սա դուրս գալով վերյիշեալ 244-ից, 1898—99 ուսում. տարւայ վերջում երկսեռ սաների թիւն էր 228:

Վարչութիւնը գիտնալով, որ աշակերտ-աշակերտուհիների բնաւորութեան այս և այն կողմի գաղտնիքը, դասերի մէջ առաջանալու և յետ մնալու պատճառը պէտք է որոնել շատ անգամ ընտանիքներում և միանգամայն հեռու մնալ ամեն բանի մէջ անհատապէս մանուկներին մեղադրելուց, անհրաժեշտ դատեց, որ դաստիարակները մօտ գան աշակերտ-աշակերտուհիների տները և ծանօթանան նրանց կացութեան հետ: Հաւաքած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ երկսեռ սաները հետևեալ դասակարգի զաւակներ են.—



„ԹԱՄԱՐԵԱՆ“ դպրոց

| | | | |
|---|---|---|---|
| Վաճառականի զաւակ | | 40 | աշ-ուհի |
| Արհեստաւորի | " | 29 | " |
| Գործակատարի | " | 9 | " |
| Ծառայի | " | 3 | " |
| Մշակի | " | 2 | " |
| Անգործ ուսուցչի զ. | | 2 | " |
| Կալուածատիրոջ | " | 1 | " |
| Անգամալոյծի զաւակ | | 1 | " |
| Երկրագործի | " | 1 | " |
| Անյայտ գործի | " | 1 | « |
| | | 89 | աշ-ուհի |

Պարապմունքի յարմարութիւն ունեցող 67 աշակերտուհի.

Պարապմունքի յարմարութիւն չունեցող 22 աշակերտուհի.

„ՀԱՅԿԱԶԵԱՆ“ դպրոց

| | | | |
|---|---|---|---|
| Վաճառկնի. զաւակ | | 41 | աշակերտ |
| Արհեստաւորի | " | 37 | " |
| Երկրագործի | " | 22 | " |
| Գործակատարի | " | 12 | " |
| Ծառայի | " | 5 | " |
| Խոհարարի | " | 5 | " |
| Մշակի | " | 4 | " |
| Լւացարարի | " | 4 | " |
| Հայթուխի | " | 2 | " |
| Աղախնի | " | 1 | " |
| Քահանայի | " | 2 | " |
| Հ. մեռած, մայրը անգ. | | 5 | " |
| | | 140 | աշակերտ |

Պարապմունքի յարմարութիւն ունեցող 95 աշակերտ.

Պարապմունքի յարմարութիւն չունեցող 45 աշակերտ.

Ներկայ ուսուցչական խումբը չբաւականացաւ միայն իր երկսեռ սաների ընտանեկան կացութեամբ, այլ ցանկացաւ նրանց առողջապահական վիճակը, նրանց յիշողութեան չափն էլ իմանալու. սա պէտք է պարզ էր, թէ այս և այն աշակերտ-աշակերտուհու մտաւոր ու բարոյական առաւելութիւնները և կամ պակասութիւնները ինչ աստիճան ժառանգական և ինչ աստիճան անհատական են. դրանով պիտի մեղմանար և կամ խստանար դըպրոցի պահանջը դէպի այս կամ այն աշակերտ-աշակերտուհին: Երկ-

սեռ դպրոցների սաները բժշկական քննութեան ենթարկելու համար փողով բժիշկ հրաւիրելու միջոցներ չկային, այդ շատ լաւ յայտնի էր վարչութեանս: Նա փութացաւ գտնել բժիշկ պրն. Փաշայեանին, խնդրելով ժամանակաւորապէս յանձն առնել դպրոցական բժշկի պաշտօնը. յարգելի բժիշկ Դոկտոր Ս. Փաշայեանը ամենայն ուրախութեամբ յանձն առաւ առանց մի վարձատրութեան կատարել դպրոցական բժշկի պաշտօնը: Դոկ. Ս. Փաշայեանը սկսեց իր քննութիւնը 99 թ. փետրուար 23-ին և վերջացրեց Մարտ 10-ին: Ոչ միայն այս, այլ և տարւոյ սկզբից մինչև վերջը աշակերտ-աշակերտուհիների մէջ պատահած չքաւոր հիւանդներին, մանաւանդ բկացաւ ունեցողներին ուղարկել ենք նրա մօտ և խորհուրդներ ստացել. տարափոխիկ հիւանդութիւն երևալիս իսկոյն տեղեկութիւն է տւել նախազգուշութիւն ձեռք առնելու համար. նա ամենայն ուրախութեամբ օգնել և նպաստել է իր այդ տեսակ գործունէութեամբ աշակերտ-աշակերտուհիների ֆիզիկական կրթութեանը: Յարգելի Դոկ. Ս. Փաշայեանի օրինակելի ու անձնուէր աշխատանքի համար դպրոցներիս վարչութիւնը բարոյական պարտք է համարում իր խորին շնորհակալութիւնը յայտնել հրապարակով:

Կատարուած բժշկական քննութեան արդիւնքն է հետեւեալը.—



1899 թ. փետրուար 23-ից մինչև Մարտ 10-ը
բժշկական քննութեան ենթարկուած են
8—16 տարեկան

140 աշակերտ — 88 աշակերտուհի

| | թւով աշ. | % | թւ. աշ-հի | % |
|---|---|---|---|---|
| **Տեսողութիւն** | | | | |
| սկար | 7 | 5 | 4 | 4,5 |
| միջակ | 17 | 12,1 | 10 | 11,4 |
| լաւ | 116 | 82,9 | 74 | 84,1 |
| **Լսողութիւն** | | | | |
| աւշային | 2 | 1,4 | 2 | 2,3 |
| սկար | 6 | 4,3 | 2 | 2,3 |
| միջակ | 54 | 38,6 | 44 | 50 |
| լաւ | 78 | 55,7 | 40 | 45,4 |
| **Պատուաստ** | | | | |
| ծաղիկ հանած | 50 | 35,7 | 22 | 25 |
| պատուաստ եղած | 65 | 46,4 | 54 | 61,4 |
| կասկածելի | 25 | 17,9 | 12 | 13,6 |
| **Յիշողութիւն** | | | | |
| թոյլ | 19 | 13,6 | 7 | 8 |
| միջակ | 43 | 30,7 | 21 | 23,8 |
| լաւ | 78 | 55,7 | 60 | 68,2 |
| [illegible] — Գլխի վէրք ունեցող | 4 | — | 1 | — |
| Ձեռի " " | 1 | — | — | — |
| Շիլ | — | — | 2 | — |
| կաղ | — | — | 2 | — |
| նեարդային | — | — | 1 | — |
| [illegible] | — | — | 2 | — |
| [illegible] | 1 | — | — | — |

Դպրոցների վարչութիւնը ճանաչելով խաղերի ազդեցութիւնը ֆիզիկական ու բարոյական կողմերի վրայ, աշխատել և ամենախիստ ընտրութիւն է արել խաղերի մէջ. նոր և յարմար խաղեր սովորեցնելով՝ վերացրել է մարդու բնաւորութեան մէջ վատ կողմեր զարգացնող խաղերը. օրինակ՝ վէգ-խաղալը վերացնելու համար մի շարք ուրիշ խաղեր սովորեցին. Հոգաբարձութիւնը իր նեղ միջոցներից չզլացաւ զուգափայտեր շինել տալ, լսելով մանկավարժական ժողովի համոզեցուցիչ փաստերը: Նոր խաղեր սովորելու հետ միասին և բոլոր ուսուցիչների հակակրութիւնը տեսնելով դէպի վէգ-խաղը, ինքնաբերաբար մոռացին, թողին շահախնդրութիւն զարթեցնող այդ խաղը: Նրանք թէ նոյն կերպով հետևէին և՛ ընտանիքները: Այստ խաղեր սովորելու յարմարութիւնից զուրկ է հայաթը. մէկ կողմից փոքրութիւնը, իսկ միւս կողմից գերեզմանաքարերից առաջ եկած բարձր ու փոս տեղերը բոլորովին խանգարում են. տղայոց դպրոցի հայաթի այդ անյարմարութիւնը վերացնելու մասին մտածում է. մինչ դեռ կարելի եղաւ մօտ ժամանակներս կարգի բերել օրիորդաց դպրոցի հայաթը:

Գալով աշակերտ-աշակերտուհիների ուսման ընթացքին, վարչութիւնս այն կարծիքին է եղել, որ նրանց չպէտք է կերակրել անմիտ թեւանշաններով, որ բացի նախանձից, ատելութիւնից և թեւանշանի համար դասերը անգիր անելու վնասակար ազդեցութիւնից, ուրիշ ոչ մի օգուտ չունի թեւանշանի սիստեմը: Ծնողներին ու խնամակալներին ժողովի հրաւիրելով՝ առաջարկել է, որ ցանկացողները կարող են դիմել վարչութեան և տեղեկանալ իրանց փոքրիկների մտաւոր յառաջադիմութեան մասին: Իսկ դասատուները թոյլերին հայրաբար խրատել են աշխատելու. որպէսզի դպրոցը իր նպատակին հասած լինի, մինչև անգամ շատ տարիներից թոյլ լինողների ծնողներին ու խնամակալներին հրաւիրել է դպրոց, որ առանձին ուշադրութիւն դարձնեն. սա աւելի գործնական է, քան թէ մի քանի նամականներ գրելով ծնողներին հետ՝ պարտականութիւնը կատարած համարել: Չնայած վարչութեան այս կերպ կարգադրութեանը, էլի ծնողներից ու խնամակալներից ոմանք չը-



բարեհաճեցին գալ դպրոց գէթ իրանց փոքրիկների օգտի համար:

Դասատուները նկատել էին, որ դասարաններին անհամապատասխան աշակերտ-աշակերտուհիներ կան բաւական թւով. այնպէս որ անցեալ 1897|1898 ուսում. տարւայ գործերից ոչինչ չէ մնացել, որ կարելի լինէր ասել, թէ ինչպէս են կատարուած փոխադրութիւնները.. այս և սրա հետ միասին չափազանց անհետաքրքրութիւն տեսնելով առհասարակ աշակերտ-աշակերտուհիների մէջ, խորհուրդը միաձայն այն կարծիքին էր, որ սկսել առարկաները այնտեղից, որտեղից հասկանալի և մատչելի է նրանց մտաւոր պատրաստութեանը. շտապել և ձևի համար փքուն ծրագիրներ կազմելը հեռու, շատ հեռու է եղել ներկայ ուսուցչական խմբի գործունէութիւնից: Այդ ուղղութիւնը (անցնել քիչ, բայց մարսելի դարձնել) ունեցաւ իր լաւ ազդեցութիւնը. հետզհետէ աշակերտ-աշակերտուհիների մէջ առաջ եկաւ հետաքրքրութիւն և հարցասիրութիւն, մի բան, որ բացակայում էր տարւայ սկզբին:

Վարչութիւնը աշխատել է առարկաների աւանդելը դարձնել կենդանի և առարկայական. այդ կողմից մի գեղեցիկ փաստ է օտար լեզուների դասաւանդութեան մեթոդը. սովորեցնել ոչ թէ թարգմանաբար, այլ խօսակցաբար՝ առարկայական ձևով. նոյնը կարելի է ասել հայրենագիտութեան, աշխարհագրութեան և միւս առարկաների վերաբերութեամբ. միայն բացառութիւն է կազմել պարսկերէնը:

Այդ տեսակ դասաւանդութեան համար եղել են դպրոցական մի քանի զբօսանքներ, որ դիտողաբար, անձնական փորձով ծանօթանան ու բնութեան մասին պարզ գաղափար կազմեն: Աշխարհագրութեան համար չեն եղել դպրոցում քարտէզներ (եղածները բոլորովին պատառոտուած էին). վարչութեան և դասատու ուսուցչի խնդրանօք ու առաջարկութեամբ՝ Հոգաբարձութիւնը բերել տուեց Ադոլֆերտի քարտէզները (հինգ Մայր-ցամաքները, կիսագնդերը, Ռուսական Տէրութեան մեծ ու փոքր քարտէզ), մի բան, որ կարող է պատիւ բերել ամեն մի դպրոցի համար:

Միևնոյն ժամանակ աշակերտ-աշակերտուհիների մտաւոր

ու բարոյական յառաջադիմութեանը պիտի օգնէր նաև դպրոցի „Մանկական Գրադարանը". տարւոյ սկզբում կար միքանի հատ ու կտոր գրքեր և ցուցակ, որի հիման վրայ պակասած էին 65 գիրք և ամսագրեր. այդ մասին Հոգաբարձութեանը ծանուցել է 98 թիւ Նոյեմբեր 6-ին. մինչև օրս էլ յայտնի չեղաւ, թէ այդ գրքերը նախկին ուսուցչական խմբի անդամներից որի մօտն են և ինչու համար: Դժուար կացութիւն. դպրոցը նիւթապէս անապահով, մինչդեռ Մանկական Գրադարանի գոյութիւնը անհրաժեշտ է: Բարեբաղդաբար 98 թ. Նոյեմ. ամսի վերջերում և Դեկտեմբերի սկզբում Չորս դասարանների աշակերտների մէջ երևան են ընկերութիւններ, որոնց նպատակն էր իրանց անդամավճարներով կազմել „Մանկական Գրադարան" և ինքնազարգացմամբ զբաղուել: Վարչութիւնը ուշադիր հոգատարութեամբ սկսեց դրանց ուղղութիւն տալ և այնպիսի հիմքերի վրայ դնել, որ չլինի թէ ընտանիքներին ծանրաբեռնութիւն պատճառէին: Աշակերտները „Աւետիս" անուն տալով և իրանց անդամավճարներով մի թեթև գումար կազմեցին. ուսուցչական խումբը „Ուշացան" պիէսը էժանացրած գներով երկրորդ անգամ խաղաց. այս բոլոր արդիւնքով (ծրգ 40 ռուբ. Ուսուցչաց ընդհանուր) վարչութիւնս բերել տուեց մանկական գրքեր.—

| | | |
|---|---|---|
| Գնած նոր գրքեր . . . . | 180 | կտոր |
| Նուէրներ . . . . . | 33 | " |
| Դպրոցում եղած (հին գրքեր) . . | 44 | " |
| Տղայոց Ե. դասարանը նուիրել է . . | 32 | " |
| " Ա. " " " . | 12 | " |
| ընդամենը | 301 | կտոր |

Այս քանակութեան գրքերով կազմակերպուեց Մանկական Գրադարան, որով կարելի եղաւ մասամբ բաւարարութիւն տալ երկսեռ սաների ընթերցասիրութեանը:

Աշակերտ-աշակերտուհիների ընթերցանութիւնը կանոնաւորելու համար ընտրուեց յանձնաժողով, որը բոլոր գրքերը կար-



գալով բաժանեց դասարանների զարգացման համապատասխան բաժինների: Տունը տանելու ընթերցանութեան գրքեր բաժանւում էին գ. բաժանմունքներից սկսած. շաբաթական ստանում էին մի գիրք և վերադարձնելիս մշակած հարցերին պիտի պատասխանէին գրադարանապետին և կամ նրան նշանակուած օգնականներին. այդպէս էր արւում, որ չլինի թէ առանց կարդալու յետ բերեն և այդպէս ընթերցանութիւնը ձևականութիւն դառնայ: Բացի սրանից ընթերցանելի գրքերի վերաբերմամբ աշակերտ-աշակերտուհիներից հաշիւ պահանջելն այն օգուտն ունի և, որ կ'իմացւէր, թէ ինչ չափով են ըմբռնել կարդացածի միտքը:

Արդէն հասարակութեանը յայտնի է, որ ներկայ 1898/99 ուսում. տարում Լիլաւայի Երկսեռ դպրոցներում հրապարակական քննութիւններ չեղան, ի նկատի ունենալով նրա հակամանկավարժական ու հակաառողջական կողմերը. քննութիւնը ձևականութիւնից էլ ձևական բան է. դա խոստովանում է խելքը գլխին իւրաքանչիւր անհատ, որ սովորութիւնների ու նախապաշարումների գերի չէ. դրա համար այնքան սուել խօսել է, անգամ „Լուսաւորական" մի դասախօսութեան ժամանակ էլ վիճաբանութիւն բացւեց, որի ընթացքում քննութեան կողմնակիցներն անգամ ընդունեցին նրա ոչնչութիւնը: Մնում էր միջոց տալ հասարակութեանը դպրոցների յառաջադիմութեան հետ ծանօթանալու. այդ պատճառով դեռ տարւոյ սկզբից Լիլաւա-Թաղի երկսեռ դպրոցների վարչութիւնը հասարակութեան ժողովի հրաւիրելով՝ յորդորել էր օրական դասերին ներկայ գտնուել: 1899 թ. Ապրիլ 26-ին վարչութիւնս յայտարարութիւն տուեց և առանձնապէս ամեն մի աշակերտ-աշակերտուհու ծնողներին ու խնամակալներին ևս ուղարկեց նոյն յայտարարութիւնից, դարձեալ խնդրելով օրական դասերին յաճախել: Այս յայտարարութեան հետևանքն եղաւ այն, որ հասարակութիւնը սկսեց Ապրիլ 28-ից դասերին յաճախել մինչև Մայիս 24-ը:

Դասերին ներկայ գտնուողների թւում եղել են Ատրպատականի Առաջնորդ Նորին Սրբազնութիւն Սահակ եպիսկոպոս Այվազեան, դպրոցներիս Հոգաբարձութիւնը, Դ...ի դպրոց-

ների հոգաբարձութիւնից մէկը և ամերիկացիներ։—

Դասերին յաճախող աշակերտներից | Տղայոց և Օրիորդաց
--- | ---
թիւն է 76-ն են 123 դաս | թւով 48, ն են 39 դաս
տարւայ սկզբում 5- „ „ 8 „ |

Երկսեռ յաճախողներ ունեցել են դպրոցներս 129 հոգի, որոնք լսել են . . . . . . . 170 դաս։

Վերաքննութիւնը բոլորովին վերացել է և աշակերտ-աշակերտուհիների փոխելն ու մնալը կատարել է տարեկան աշխատանքի համաձայն հետևեալ կերպով.—

Թամամշեան օր. դպրոց

| | Ընդհ. Թիւ | Անուն. | փոխ. | Ա. Դ. քննելի |
|---|---|---|---|---|
| Ա. բաժ. Հիմ. և Զուգ. | 31 | 11 | 20 | |
| Բ. բաժ. . . . | 26 | 12 | 14 | |
| Գ. բաժ. . . . | 20 | 9 | 9 | 2 ԻԻ տար. |
| Ա. դասարան . . | 5 | 5 | — | — |
| Բ. „ . . | 7 | 3 | 4 | — |
| Տոկոսի վերածած | 89<br>— | 40<br>46 | 47<br>54 | 2 |

աւարտում են 4 աշակերտուհի

| | | Տոկոս |
|---|---|---|
| Ձրեաւոր աշակերտուհիներ | 35 | 39, 3 |
| Թոշակաւոր „ | 54 | 60, 7 |

Հայկազեան տղայոց դպրոց

| | Ընդ. Թիւ | Անուն. | փոխ. | Ա. դաս. քննելի |
|---|---|---|---|---|
| Ա. բաժ. Հ. և Զ. | 28 | 2 | 26 | |
| Բ. բաժ. . . | 37 | 15 | 22 | |
| Գ. բաժ. . . | 29 | 18 | 9 | 2 ԻԻ տ. մնցող |
| Ա. դասարան | 24 | 13 | 11 | |
| Բ. „ . | 14 | 7 | 7 | |
| Գ. „ . | 7 | 5 | 2 | |
| Տոկ. վերածած | 139<br>— | 60<br>44 | 77<br>56 | 2 |

աւարտում են . . 2 աշակերտ

| | | Տոկոս |
|---|---|---|
| Ձրեաւորժ աշակերտ. | 52 | 36, 6 |
| Թոշակաւոր „ | 90 | 63, 4 |

Ձրիավարժ աշակերտ-աշակերտուհիների ընդհանուր թիւն է 87, որից երկու աշակերտ տարւայ սկզբին հեռացել են, իսկ մնացած 85-ը բարերարւել են այսպէս.—

ա.) Թաւրիզի Հայուհեաց Բարեգործ. Ընկերութեան որդեգիր-ուհիներ — 36 (18 աշակերտ և 18 աշակերտուհի), որոնք ստացել են դասական պիտոյք ու հագուստ։

բ.) Ուսուցչանոցի մի պարոն որոշ գումար տալով պահել է որդեգրուհի . . . . . 2

գ.) Մասնաւոր մարդիկ հագուստ են արել երկու աշակ. 2



Միւսներին իրանց դասական պիտոյքը կամ դպրոցից են ստացել, և կամ իրանք են հոգացել։

Վարչութիւնս իր խորին շնորհակալութիւնն է յայտնում բոլոր բարերարներին, մանաւորապէս Թաւրիզի Հայուհեաց Բարեգործ. Ընկերութեանը, որ բացի 36 որդեգիր-որդեգրուհիներ պահելուց՝ թոյլ է տւել իր արհեստանոցի վարժուհուն՝ շաբաթական 12 դաս ձրիաբար աւանդել և դպրոցներիս էլ դրամական նպաստ է տւել։

4.) Դպրոցի առողջապահական կողմը շէնք-շէնքի նկատմամբ։

„Թամամշեան“ օրիորդաց դպրոցի շէնքը առողջապահական կողմերով կարելի է գոհացուցիչ համարել. թէև միջանցքի ու դասարանների աղիւսած յատակը առատ փոշու անսպառ աղբիւր է, բայց տեղական պայմաններին նայած՝ առ ժամանակ պիտի հաշտւել, որ երբ դպրոցը ապահովւի, կարողանայ մի պատկառելի գումար ծախսելով՝ տախտակամած անել տայ կամ ուրիշ կերպ չարիքի առաջն առնէ։ „Հայկազեան“ տղայոց դպրոցական շէնքի համար էլ նոյնը պիտի ասել. միայն հին շինութիւնից 2 դասարան բոլորովին քանդւած ու խարխուլ վիճակի մէջ լինելով՝ կարօտ են վերաշինութեան։

5.) Ընդհանուր պայմաններ։

ա.) Աշակերտական սեղաններն ու նստարաններն այնքան քիչ են, որ երկսեռ սաները համարեա ստիպւած են մէկ մէկու վրայ թափւել. սրանից առաջանում է շատ մեծ անյարմարութիւն. բացի այդ՝ սեղաններն ու նստարանները ոչ մի համաչափութիւն չեն ներկայացնում որոշ հասակների համար. փոքրիկները դրել կարդալու միջոցին կամ ստիպւած են սատւիկ կանալ, և կամ կանգնել. այս բանից առաջանում է մէջքի ծռութիւն, բատմոքսի խանգարում և այլն և այլն։ Դրա վնասակարութիւնը գիտնալու հետ միասին դպրոցը չէ կարողացել յիշեալ չարիքի առաջն առնել դրամի պակասութեան պատճառով։ Բայց իմ կար-

35312

ծէքով պիտի աշխատել իւրաքանչիւր տարի մի դասարանի կահ-կարասին վերաշինել տալ առողջապահական պահանջների համա-ձայն և դա պէտք է սկսել ստորին բաժանմունքներից: Հարկա-ւոր է այդպէս վարուել, եթէ մեզ համար թանկ է առողջ սերունդ ունենալու միտքը:

բ.) Դասերով ծանրաբեռնուած ուսուցիչներ, մանաւանդ վերակացուներ ունենալը չափազանց անյարմար և վնասակար է դպրոցի յառաջադիմութեանը: Ծանրաբեռնութիւնը վերջ 'ի վերջոյ կը թուլացնէ, կը քայքայէ ուսուցչի առողջութիւնը. երբ եռանդից զրկւեց ուսուցիչը, ամէն բան կորած է. դասերի տակ ճնշուած վերակացուն երբէք չի կարողանալ հսկել և առաջնոր-դել դասամիջոցներին կատարուող խաղերին:

գ.) Հայաթների փոքրութիւնը թոյլ չէ տալիս ազատ խաղեր կազմելու և արգելք է դառնում աշակերտ-աշակերտուհի-ների ազատ շարժումներին, որ անհրաժեշտ է ֆիզիկական զար-գացման համար:

6.) Ցանկալի դրութիւն:

ա.) Սեղան-նստարանների աստիճանաբար փոփոխու-թիւն և վերանորոգում, ինչպէս ասացի, իւրաքանչիւր տարի մի կամ երկու դասարանի համար փոքրերից սկսած:

բ.) Դասերով չծանրաբեռնել ուսուցիչներին. տալ ամէն մէկին շաբաթական 18—20 դաս. վերակացուներ պահել քիչ դասերով, ամենաշատը շաբաթական 18 դաս:

գ.) Հայաթները կարգի բերել և ընդարձակել:

դ.) Նոյնութեամբ պահել տղայոց դպրոցը՝ նոր դասա-րան բաց չանել, քանի որ դրամական միջոցները պակաս են:

ե.) Խուսափել միացած դասարաններից. և

զ.) Այս տարով բաց անել օրիորդաց Ներքին Դասարան՝ 'ի նկատի առնելով կանացի սեռի կրթութեան կարևորութիւնը մատաղ սերնդի դաստիարակութեան գործում: Այս մեծ ծախք



չի պահանջիլ, եթէ օրական դասերի թիւը առժամանակ լինի 3:

'ի դիմաց մանկավարժական ժողովի
Տեսուչ՝ Տիգրան Ռաշմաճեան

30 Մայիս 1899
Թաւրիզ

Թաւրիզի Լիլաւա-Թաղի „ՀԱՅԿԱԶԵԱՆ“ և „ԹԱՄԱՐԵԱՆ“ երկսեռ դպրոցների 1899-1900 ուսում. տարւայ

# ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Այս ուսումնական տարում դպրոցների ուղղութիւնը միևնոյնն է եղել, ինչ որ անցած տարումն էր: Վարչութիւնս հաւատարիմ մնալով իր ուղղութեան հիմնական գաղափարներին՝ երբէք չէ խուսափել պահանջուած փոփոխութիւններն ու նորութիւնները մտցնելուց: Ուրիշ կերպ չէր կարող լինել. կեանքը անընդհատ փոփոխւում, յառաջադիմում է. դպրոցն էլ՝ ինչպէս կեանքի մի փոքրիկ մասը՝ կամայ-ակամայ նոյն հոսանքին է ենթարկւում. բացի սրանից՝ հէնց մի տարւայ գործունէութիւնն ու փորձն էլ կարող էին պարզ կերպով ցոյց տալ փոփոխութիւնների անհրաժեշտ կարիքը: Թէ ինչ նորութիւններ են առաջ եկել, առանձնաբար կը տեսնենք:—

## 1. Ուսումնական տարւայ սկիզբը.

Ներկայ ուսուցչական խումբը այնպիսի դժւարութիւններ չունէր, ինչպէս անցեալ ուսումնական տարումն էր. որովհետև խումբը մեծ մասով իր կազմի մէջ մնաց: Ուսուցիչներից շատերը 1899 թ. Սեպտեմ. 3-ին տեղ հասնելով՝ արդէն նոյն ամսի 1-ին սկսուած նորեկների ընդունելութիւնը շարունակեցին, որը պիտի վերջանար Սեպտեմ. 15-ին՝ դպրոցի վարչութեան կողմից տուած յայտարարութեան համաձայն: Թէև գրագէտ և գիւղացի աշակերտների համար վարչութիւնս յարմար դատեց ընդունելութիւնը աւելի յետաձգել՝ նաև այն պատճառով, որ տեղական պայմաններին նայած ճշտապահութիւնը այնքան էլ իրագործելի չէ, դրա համար էլ շատերը կարող էին զրկւել դպրոցից և երկրորդ՝ մի ուսուցիչն էլ դեռ ճանապարհին էր:

Խնդրատուներ եղել են ընդամէնը ութսունչորս (84), որոնցից 28-ը աղջիկ և 56 տղայ են: Սրանցից 13 խնդրատու մերժուած են հասակի փոքրութեան և կամ տարիքի համապատասխան պատրաստութիւն չունենալու պատճառով: Սա դուրս գալով ընդհանուր թւից՝ կմնայ 71, որոնք ընդունուել են հետևեալ բաժանմունքներում.—

**Օրիորդաց Թամամշեան դպրոց**

| | | |
|---|---|---|
| I տարի (ա. բաժան.) | 24 | աշակերտուհի |
| II " (բ. բաժան.) | 1 | " |
| | 25 | |
| 98\|99 ուս. տարուանից. | 73 | |
| | 98 | աշակերտուհի |

**Տղայոց Հայկազեան դպրոց**

| | | |
|---|---|---|
| I տարի (ա. բաժ.) | 27 | աշակերտ |
| II " (բ. ") | 12 | " |
| III " (գ. ") | 5 | " |
| IV " (ա. դաս.) | 2 | " |
| | 46 | |
| 98\|99 ուս. տար-նից | 116 | |
| | 162 | աշակերտ |

„Հայկազեան“ և „Թամամշեան“ երկսեռ դպրոցներում սովորող աշակերտ-աշակերտուհիների թիւը տարւոյ սկզբում եղել է 260:

Մինչև Սեպտեմ. 14-ը 1899 թ. նորեկների ընդունելութիւնը թեթևացաւ. նոյն օրուանից սկսեց դասացուցակով պարապմունք. մինչև Սեպ. 23-ը ներկայ ուսուցիչներից իւրաքանչիւրը պարապում էր օրական գրեթէ 5 դաս. երբ պակաս ուսուցիչն էլ Սեպտեմբեր 23-ին տեղ հասաւ, նոյն ամսի 24-ից դասերը սկսեցին կանոնաւորապէս:

## 2. Ուսուցչական խումբ

Դասատուների թիւը տեսչի հետ միասին տասնմէկ (11) է: 1899-1900 ուսումնական տարում առարկաները բաժանուած էին այսպէս.—



| ԴԱՍԱՏՈՒՆԵՐ | ԱՒԱՆԴԵԼԻ ԱՌԱՐԿԱՆԵՐ | Շաբ. Դաս. Թ. |
|---|---|---|
| 1. պ. Սիրաք Գրիգորեան | Կրօն և թւաբանութիւն . . | 25 |
| 2. Տ. Յորդանես Դաւթեան | Ֆրանսերէն . . . | 10 |
| 3. պ. Յոնան Դաւթեան | Աշխ. հայրեն. Հ. պատ. և ը. պատմ. | 20 |
| 4. " Միք. Զառաֆեան վերակացու և քարտուղար | Կրօն, Հ. լեզու թւաբան. գրութ. | 19 |
| 5. " Արշակ Մեհրաբեան | Հայոց լեզու և Երգեցողութիւն | 23 |
| 6. " Մարտ. Յարութիւնեան | Հ. լեզ. Ռ. լեզու և Գծագրութիւն | 24 |
| 7. " Սեդ. Յարութիւնեան | Կրօն և Հայոց լեզու | 24 |
| 8. օր. Ա. Տ. Յարութիւնեան վերակացու | Կրօն, գծագրութիւն և Ձեռագործ | 22 |
| 9. պ. Մեսրոպ Քարամեան | Պարսկերէն . . . | 12 |
| 10. " Երուանդ Ֆրանգեան | Հայոց լեզու և թւաբանութիւն | 24 |
| 11. " Տիգրան Ռաշմաճեան | Կենդ. բուս. Մրդկզմ. բնխօս. եգիտ. | 14 |
| | | 217 |

Օրիորդաց Երրորդ դասարան բաց անելու խնդիրը դեռ անցեալ ուսումնական տարւայ վերջից զբաղեցնում էր և՛ ուսուցչական խմբին, և՛ Հոգաբարձութեանը. լրիւ դասարան պահել չէր կարելի, որովհետև նիւթական սուղ միջոցները թոյլ չէին տալիս մի ուսուցիչ էլ աւելի հրաւիրել. դպրոցի վարչութիւնն ու Հոգաբարձութիւնը լաւ համարեցին՝ եթէ ոչ լրիւ՝ գոնէ լրացուցիչ Գ. դասարան բաց անել, որտեղ պիտի աւանդուէին անհրաժեշտ առարկաները: Նոյն դասարանի ուսուցիչների համար որոշեց մի փոքրիկ գումար, որը պէտք է դասատուների մէջ բաժանուէր դասերի քանակութեան համեմատ. բայց ուսուցչական խումբը տեսնելով մի ուրիշ ստիպողական կարիք, այդ գումարը թողեց դպրոցին և ինքն յանձն առաւ իր մէջ ձրիաբար բաժանել օրիորդաց լրացուցիչ Գ. դասարանի դասերը հետևեալ կերպով.—

| Դասատուներ | Աւանդելի առարկաներ | Շ. դ. թիւ |
|---|---|---|
| 1. պ. Ս. Գրիգորեան | Թւաբանութիւն . | 2 |
| 2. Տիկ. Յորդանես Դաւթեան | Ձեռագործ . . | 1 |
| 3. պ. Յոնան Դաւթեան | Հայոց պատմ. և ընդհ. պատմ. | 3 |
| 4. " Արշակ Մեհրաբեան | Հայոց լեզու . . | 3 |
| 5. " Մարտ. Յարութիւնեան | Քննական ընթերցանութիւն | 2 |
| 6. " Տիգրան Ռաշմաճեան | Մարդակազմ. ու բնախօսութիւն | 2 |
| | | 13 |

Այսպէս շաբաթական դասերի թիւն էր ընդամէնը 230:

Հիւանդութեան և յարգելի ուրիշ պատճառներով նշանակած դասերի թիւն է հարիւր տասներկու (112), իսկ աւելի դասեր են պարապել հինգ (5)։ Տիկին Յորդանա Դաւթեանը թոքերի հիւանդութեան պատճառով ստիպուեց փետրուար 22-ից մինչև Մարտ 19-ը դադարել դպրոց յաճախելուց։ 1900 թ. Մարտ 20-ից յարգելի Տիկինը նորից սկսեց իր պարապմունքը. ի նկատի ունենալով, որ նա երբէք չպիտի յուզուի, յոգնածութիւն չպիտի զգայ, նրան թոյլատրուեց շաբաթական միայն 4 դաս ֆրանսերէն պարապելու. դասի տևողութիւնը պէտք է $^1/_2$ ժամ լինէր. չնայած սրան՝ իրաւունք ունէր ամէն մի րոպէ դասը դադարեցնել և իսկոյն դասարանից դուրս գալ, եթէ իրան վատ զգար և կամ վրան յոգնածութիւն գար։ Այսպէս շարունակուեց մի որոշ ժամանակ. մի քանի շաբաթից յետոյ յարգելի Տիկնոջ թոքային հիւանդութիւնը այնպիսի բնաւորութիւն ընդունեց, որ կարօտ էր աւելի լուրջ ուշադրութեան ու հոգատարութեան. հէնց այս պատճառով Դաւթեան ամուսինները 1900 թ. Ապրիլ 18-ին հարկադրուեցին հեռանալ տեղիցս։ Այդ օրուանից ֆրանսերէն բոլոր դասերը բաց մնացին. միւս առարկաները պահուեցին այն չափով, ինչ չափով հնարաւոր էր. նայած յարմարութեանը զանազան դասարաններ միացուեցին, որովհետև անկարելի էր 9 ուսուցչով կառավարել 11 բաժանմունք, մանաւանդ թէ պարսկերէնի դասատու չէր կարող երրորդ ժամեր ունենալ։ Այս փոփոխութիւնների ժամանակ պ. պ. Մկք. Զատաֆեանի, Մարտիրոս Յարութիւնեանի և Երուանդ Ֆրանգեանի դասերը աւելացան մի մի-երկու երկու դասով. իմ՝ 16 դասից՝ բարձրացաւ 20-ի։ Թէև ցանկալի չէր, որ ես այդքան ծանրաբեռնուած լինէի, բայց կարճ ժամանակամիջոցի համար էլ ուրիշ կարգադրութիւն անել չէր կարելի։

Ուսուցչական խումբը ամբողջ տարւայ ընթացքում ունեցել է երեսուներեք (33) մանկավարժական ժողով. նիստերին մասնակցել են բոլոր անդամները. շատ քիչ են բացակայել. միայն չհաշուելով՝ որ Տիկ. Դաւթեան տկարութեան պատճառով 1900 թ. փետրուարից և պ. Մեսրոպ Քարամեան յարգելի ուրիշ հան-



գամանքով նոյն թւի Յունուարից սկսած չէին կարողացել նիստերին ներկայ լինել։ Այդ ժողովներում վարչութեան զբաղեցնող խնդիրներից պէտք է յիշել հետևեալները.—

1. Աշակերտների համազգեստը նոյնը պահելով յարմար դատուեց I տարւանից մինչև IV տարին (ա. բաժ.—ա. դաս.) պարտադիր անել, որ հագուստի վրայից մոխրագոյն կամ կապոյտ հասարակ չթից գոգնոց հագնեն (գոգնոցը բլուզի նման է և այնքան երկար, որ հասնում է մինչև ծնկները). դա այն յարմարութիւնն ունի, որ հագուստը մաքուր կը մնայ և շուտ չի մաշուի։

2. Անցեալ տարւայ փորձից օգտուելով՝ որոշուեց ներկայ ուսումն. տարում էլ II տարւայ (բ. բաժանմունքի) աշակերտ-աշակերտուհիներին խառը նստացնել. սրա հետ հաշուելով I տարիներն էլ, մենք ունեցանք 4 խառը բաժանմունք՝ երկու I դասի և երկու II դասի, որտեղ 7-10 տարեկան աշակերտ-աշակերտուհիները միասին էին սովորում։

3. Այս ուսումնական տարում օրիորդաց V դասը (բ. դասըն) չեղաւ, որովհետև IV տարւայ (ա. դասարանի) 5 աշակերտուհին էլ մնացին իրանց դասարանում, ինչպէս այդ յայտնի է անցեալ հաշուից էլ. սա մեզանից անկախ է և պատճառը պէտք է որոնել մեզանից առաջ գործող վարչութեան մէջ։ Ուրեմն օրիորդաց դպրոցը ունեցել է I, II, III, IV և լրացուցիչ VI տարի, իսկ տղայոցը՝ I—VI տարին լրիւ. ասել է երկսեռ դպրոցներում եղել են ընդամէնը (11) դասական բաժանմունք։ Օրիորդաց V տարի չլինելու պատճառով վարչութիւնս ստիպուեց անցեալ տարւայ V տարում մնացող 3 աշակերտուհուն թոյլ տալ սովորելու լրացուցիչ VI-ում։

4. Վճռուեց դասերի տևողութիւնը անել I տարիների համար 30 րոպէ, II տարիներին՝ 35 րոպէ, և մնացածներին՝ 45 րոպէ, ինչպէս այս վերջինը ընդունուած էր անցած ուսումն. տարում ևս. դասամիջոց եղել է 15 րոպէ. հասկանալի է, որ I և II տարիներին հանգիստ կը լինէր ամէն մի դասից յետոյ 25-30 րոպ։

5. Աւելորդ համարուեց գրութեան առանձին դասեր ունե-

նալ. Ռուսաց լեզուի ուսուցիչը նոյն բանը պիտի առաջ տանէր առարկայի հետ զուգընթացաբար. միայն օրիորդաց ա. դասարանում լինում էր շաբաթական մէ կանոնաւոր գրութեան առանձին դաս: Փորձը ապացուցեց, որ գրութիւնը լեզուի հետ միացնելով՝ վարչութիւնը երբէք սխալուած չէ:

6. Խումբը այնքան էլ հաշտ աչքով չէ նայել այն բանի վրայ, որ այս տեսակ տարրական դպրոցներում պատմութիւն է աւանդւում. բայց նկատի ունենալով կեանքի պահանջները, չէր կարելի այդ առարկան մէջտեղից վերցնել. ուստի որոշեց Ռուսաց պատմութիւնը սկսել ոչ թէ ա. դասարաններից, ինչպէս անցած ուսումնական տարում, այլ բ. դասարաններից. այս տարում հաւանաբար աւելի նախապատրաստուած կը լինէին նոյն առարկան հասկանալու: Իմ կարծիքով դպրոցը որքան բարձրանայ դասարաններով, այնքան պիտի յետաձգուի պատմութեան դասաւանդութիւնը:

7. Դպրոցների ցածր բաժանմունքներում կատարեալ պատիժ, գլխացաւանք է այն հանգամանքը, որ գրիչ, գրչակոթ, մատիտ և թանաքաման կամ մոռանում են տանը և կամ շատ անկանոն վիճակի մէջ են պահում. մասնաւորապէս այստեղի համար կարելի է աւելացնել գոյնզգոյն թանաքների անյարմարութիւնը, որը տեսողութեանն էլ սաստիկ վնասակար է: Այս բոլոր անյարմարութիւնների առաջն առնելու համար նախ՝ դպրոցի հաշուին թիթեղեայ թանաքամաններ շինեցին և դրեցին բոլոր դասարաններում. երկրորդ՝ [illegible] ինքը դպրոցն էր մատակարարում ամենաչնչին վճարքով, այն է թոշակատու իւրաքանչիւր աշակերտ-աշակերտուհի ամբողջ տարուայ համար վճարում էր 2 շահի (Ռուսական մօտ 2 կոպէկ). և երրորդ՝ գրիչ, գրչակոթ և մատիտ պահւում էր դպրոցում, դասարան-դասարան. պէտք եղած ժամանակ բաժանւում և էլի յետ էր հաւաքւում. մատիտի ծայրերը պատրաստում էին իրանք տասնատուները. բ. և գ. դասարանցիները որպէս մեծեր՝ իրանք էին պահում իրանց գրչակոթերն ու մատիտները: Սրանով թէ դպրոցը ազատուեց դժուարութիւններից



թէ՛ ընտանիքներն էլ աւելորդ ծախքերից ու նեղութիւններից հեռու մնացին:

8. Վարչութիւնս ցանկացաւ, որ գ. դասարանի աշակերտուհիները գործնականապէս մասամբ ծանօթանան, թէ փոքրիկներին ի՞նչպէս են սովորեցնում, ի՞նչպէս են նրանց հետ վարւում. ուստի թոյլ տուեց նրանց ազատ ժամերին ուրիշ բաժանմունքներում՝ գլխաւորապէս փոքրերի մօտ դասեր լսելու. նրանք այնքան հետաքրքրուած էին, որ դասի վերջանալուց յետոյ ուսուցչի այս կամ այն վերաբերմունքի մասին խօսում-վիճաբանում էին իրանց դասատուի և կամ մէկ ուրիշ ուսուցչի հետ:

9. Գ. բաժանմունքում օտար լեզուների դասի տևողութիւնը որոշեց ½ ժամ. մանաւանդ թէ Ռուսաց լեզուն բոլորովին անծանօթ է. ½ ժամում կարելի է որոշ բառեր ու նրանցից կազմած նախադասութիւններ իւրացնել տալ. կրկնել ձանձրալի կը լինի, իսկ աւելի անցնելն էլ կը ծանրաբեռնէ:

10 Օգտակար գտնուեց աշակերտ-աշակերտուհիների համար կազմել գրական-առաւօտներ. դրա համար երկսեռ սաները բաժանեցին հետևեալ երեք խմբերին.—

ա.) Տղայոց բ. ու գ. և օր-դաց գ. դաս. կազմեցին մի խումբը
բ.) ա. դասարաններ և գ. բաժանմունքներ " երկրորդ "
և գ.) ա. ու բ. բաժանմունքներ " երրորդ "

Ամէն մէկ խմբի համար կատարւեց առանձին ու մատչելի գրական-առաւօտ. սրա նպատակն էր աշակերտ-աշակերտուհիների մտաւոր ու բարոյական կրթութեանը աւելի լայն ծաւալ տալ. սրանով աւելի ամփոփում, աւելի մարզում էին իրանց ուժերը, քանի որ հէնց իրանք երկսեռ սաներն էին դերակատարները. երբեմն ինքնուրոյն աշխատանքներ էին ներկայացնում և այսպէս մի նոր միջոց էր սա նրանց հետ աւելի մօտիկից ծանօթանալու. բացի սրանից՝ գրական-առաւօտը տալիս էր ոչ միայն գրական ու գեղարուեստական ճաշակ, այլ և պատճառում էր շատ մեծ բաւականութիւն և ուրախութիւն: Առաջին խումբը ներկայ էր լինում միւսների գրական-առաւօտներին. գ. խմբի առաւօտին ներկայ էր ամբողջ դպրոցը:

11. Որոշեց անցած ուսում. տարւայ նման ընթերցանութեան դասերը շարունակել. բացի Տիկին Յորդանա Պաւլեանից ու պ. Մ. Քարամեանից միւս դասատուներին հերթ է հասել. ընթերցանութիւնը սկսել է 1899 թ. Նոյեմբ. 9-ին և դադարել է 1900 թ. Մայիս 6-ին. այդ քան ժամանակամիջոցում ընթերցանութիւն եղել է 12 դաս:

12. Դեռ 1898-1899 ուսում. տարում մտածուած փորձնական դասերը կարելի եղաւ իրականացնել միայն ներկայ ուսում. տարում: Ուսուցիչներից մէկը դաս էր պարապում միւս դասատուների ներկայութեամբ. այս փորձնական դասը մի արտակարգ բան չպէտք է լինէր, այլ պիտի կազմէր սովորական դասի շարունակութիւնը և կամ նոր սկսելիք առարկայի առաջին դասը: Փորձնական դասից յետոյ՝ ներկայ գտնւող դասատուները ժողովւում ընկերաբար նկատողութիւն էին անում պարապող ուսուցչի պակաս կողմերի համար. ինչ ասել կ'ուզէ, որ լաւ կողմերից էլ օգտւում էին. ամբողջ խումբը խոստովանում է, որ փոխադարձաբար մէկ-մէկուց օգտւելով՝ շատ օգուտ է տւել նաև աշակերտ-աշակերտուհիներին. Փորձնական դաս լինում էր շաբաթական մի անգամ. Նոյն օրը՝ առաւօտեան 3 դասը կէս-կէս ժամ էին պարապում բոլոր բաժանմունքներում. փորձնական դաս ունեցող դասարանը մնում էր, իսկ միւսները տուն էին գնում (ծանօթ. 2 ժամ հանգստից յետոյ լինում է 4-րորդ և 5-րորդ դասը): Փորձնական դասերն սկսել են 1899 թ. Նոյեմբ. 16-ին և վերջացել 1900 փետրուար 28-ին եղել է ընդամէնը 16 դաս, որից 14-ը աւելի ժամեր են:

Վարչութեանս խորին համոզմունքով՝ յիշած տասներկու կէտում՝ անցեալ տարւայ համեմատութեամբ շատ օգտակար նորութիւններ ու փոփոխութիւններ են կատարւած. դեռ որքան փոփոխութիւնների կարիք կայ, որոնք կարօտ են ժամանակի ու տոկուն աշխատանքի:

Այստեղ հարկաւոր է ասել, որ եթէ աչքի առաջ ունենանք փորձնական դասի 14 աւելի ժամը, ընթերցանութեան 12 դասը, վերևում յիշած աւելի պարապած 5 դասը և սրանց վրայ



աւելացնելով դասացուցակից դուրս երգեցողութեան նւիրւած 8 դասը, այն ժամանակ աւելի պարապած դասերի թիւը լինում է 39-ը, որը դուրս գալով վերոյիշեալ չպարապած 112 դասից, կըմնայ ընդամէնը չպարապած 73 դաս:

Ի դէպ է ասել, որ այսքան բազմահոգ զբաղմունքի մէջ էլ ուսուցչական խումբը աշխատում էր ժամանակ գտնել հասարակութեան մտաւոր յառաջադիմութեանը ծառայել և ուրիշ ճանապարհով. խմբի մէջ միտք ծագեց տեղական երիտասարդութեան համար բաց անել Զարգացողական կուրսեր. դասեր պէտք է լինէին Ուրբաթ և Կիրակի օրերը. աւանդւելու էին Պատմութիւն, Տարրական-քիմիա, Ռուսաց լեզու, Քննական ընթերցանութիւն, Մաթեմատիկա և Տիեզերագրութիւն. ՚Ի հարկէ ոչ մի վարձատրութիւն չէր պահանջւում կուրսերի համար. այդ մասին յայտարարւեց: Զարգացողական կուրսերին յաճախելու համար արձանագրւեցին 31 մարդ: Դասերն սկսւեց 1899 թ. Դեկտեմբեր 26-ին: Բայց ցաւում ենք, որ վերջն իրանք երիտասարդներն սկսեցին թուլանալ. շատերը չէին գալիս կամ չափազանց անկանոն էին յաճախում. դրա համար էլ այս օգտաւէտ հաստատութիւնը տևեց մինչև 1900 թ. փետրուար 6-ը:

### 3. Աշակերտ-աշակերտուհիների վիճակը:

Աշակերտ-աշակերտուհիների կրթութեանը կանոնաւոր ուղղութիւն տալու համար անցած ուսումնական տարւայ նման Վարչութիւնս աչքի առաջ է ունեցել նրանց ընտանեկան դրութիւնը. նոյնպէս հրաւիրել է հասարակութեան՝ մանաւանդ ծնողներին ու խնամակալներին ժողովների. երկսեռ սաների մէջ նկատւած պակասութիւնները յայտնելով՝ Վարչութիւնը իր կողմից խորհուրդներ է տւել այդ պակասութիւնների առաջն առնելու համար. Ներկայ գտնւող հասարակութեանը առաջարկւել է, եթէ նկատողութիւններ ունի, անէ. մի խօսքով վիճաբանելու ազատ իրաւունք կար, թէև այդ իրաւունքից հասարակութիւնը երբէք չօգտւեց: Այս տարում էլ հարկաւոր էր բժշկական քննու-

թիւն: Դոկ. Ա. Փաշայեանը 'ի նկատի առնելով դպրոցների նիւթական սուղ միջոցը, շարունակեց դպրոցական բժշկի պաշտօնը վարել ձրիաբար. այս անգնահատելի ու օրինակելի ծառայութիւնների համար Վարչութիւնս կրկին ու կրկին իր շնորհակալութիւնն է յայտնում յարգելի բժշկին: Բժշկական քննութեան ենթարկուած են 96 աշակերտուհի և 158 աշակերտ. սրանից առաջ կամովին դուրս են եկած 4 աշակերտ և 2 աշակերտուհի: Քննութեան արդիւնքն է հետևեալը.—

| Օրիորդաց Թամարեան դպրոց | | | Տղայոց Հայկազեան դպրոց | | |
|---|---|---|---|---|---|
| Կազմութիւն | քանակ | % | Կազմութիւն | քանակ | % |
| լաւ . . | 56 | 58,33 | լաւ . . | 121 | 76,58 |
| միջակ . . | 36 | 37,50 | միջակ . . | 35 | 22,16 |
| տկար (թոյլ) | 4 | 4,17 | տկար . . | 2 | 1,26 |
| Տեսողութիւն | | | Տեսողութիւն | | |
| լաւ . . | 50 | 80,64 | լաւ . . | 115 | 89,15 |
| միջակ . . | 10 | 16,13 | միջակ . . | 9 | 6,98 |
| տկար . . | 2 | 3,23 | տկար . . | 5 | 3,87 |
| Յիշողութիւն | | | Յիշողութիւն | | |
| լաւ . . | 23 | 37,10 | լաւ . . | 46 | 35,66 |
| միջակ . . | 34 | 54,84 | միջակ . . | 76 | 58,91 |
| տկար . . | 5 | 8,06 | տկար . . | 7 | 5,43 |

Աշակերտ-աշակերտուհիների ֆիզիկական կրթութեանը պիտի օգնէին նաև խաղերն ու զբօսանքները, որոնց առանձին ուշադրութիւն ենք դարձրած անցեալ տարւայ նման. սրանք՝ մանաւանդ աշակերտական զբօսանքները կը տային նրանց նոր-նոր մտապատկերներ և կ'ընդարձակէին նրանց մտաւոր հորիզոնը:

Գալով երկսեռ սաների ուսման ընթացքին, վարչութիւնս եղել է անցած տարւայ կարծիքին, այն է, որ թւանշաններ և ոչ էլ քննութիւն պէտքական բաներ չեն:



Դպրոցի մտաւոր ու բարոյական յառաջադիմութեանը պէտք է նպաստէր նաև մանկական գրադարանը, որը զանազան նուէրների շնորհիւ այս տարի համեմատաբար աւելի հարստացաւ. օրինակ, 1899-1900 ուսում. տարւայ ընթացքում գրադարանը նուէր է ստացել գրքերով—

| | հատոր |
|---|---|
| 1.) Երևանի մի խումբ աշակերտներից | 129. |
| 2.) Թիֆլիսի մի խումբ երիտասարդներից | 28. |
| 3.) Մեր դպրոցի աշակերտ-ից ու հեղինակներից | 34. |
| 4.) Նախկին հաւաքած փողերի մի մասով գրադարանը Հրատարակչական ընկ. անդամ է դառել և ստացել է | 18. |
| | 209 |

անցած տարւանն էլ հետը հաշւելով՝ կը լինի ընդամէնը 510 հատոր, որոնք 340 տեսակի են պատկանում:

Դասաւանդութեան եղանակը անցեալ տարւայ նման եղել է առարկայական. պարսկերէնն էլ այս տարի աւանդւում էր նոյն մեթոդով, որ առաջի տարին բացառութիւն էր կազմում:

Աշակերտ-աշակերտուհիների փոխադրութիւնն ու մնալը կատարւել է տարեկան աշխատանքի համաձայն հետևեալ կերպով—(հաշւելով դուրս եկող աշակերտ-աշակերտուհիներին՝ տարւայ վերջում 94 աշակերտուհի և 155 աշակերտ կար).—

**Օրիորդաց Թամարեան դպրոց**

| | Ընդ. թիւ | Մնում է | Փոխուած |
|---|---|---|---|
| 1 տարի հիմ. և Զ. | 33 | 10 | 23 |
| 2 „ „ „ | 23 | 11 | 12 |
| 3 „ „ „ | 18 | 6 | 12 |
| 4 „ „ „ | 13 | 4 | 9 |
| 6 „ (Լրաց. դարն.) | 7 | 2 | 5 |
| | 94 | 33 | 61 |
| Տոկոսի վերածած | | 35,10 | 64,90 |

աւարտում են . . 5 աշ-ուհի

Զրկուած. աշ-ուհի 25. 26,20 %

Փոխադրուած . 71. 73,80 %

**Տղայոց Հայկազեան դպրոց**

| | Ընդհ. թիւ | Մնում | Փոխուած | Թողած է դպր. [illegible] |
|---|---|---|---|---|
| 1 տարի Հ. և Զ. | 29 | 9 | 20 | |
| 2 „ „ „ | 46 | 18 | 28 | |
| 3 „ „ „ | 38 | 16 | 22 | |
| 4 „ „ „ | 20 | 6 | 12 | 2 |
| 5 „ „ „ | 13 | 5 | 7 | 1 |
| 6 „ „ „ | 9 | — | 9 | |
| | 155 | 54 | 98 | 3 |
| | | 36,77 | 63,23 | |

և 9 աշակերտ

Զրկուած. աշակերտ 39. 25,79 %

Փոխադրուած „ 116. 74,21 %

Ձրիավարժ աշակերտ-աշակերտուհիներից 22-ը, որ ամենաչքաւորն էին, դպրոցից հագուստ են ստացել 1899 թ. Դեկ. 31-ին տեղի ունեցած երեկոյթի արդիւնքով, որի մանրամասն հաշիւը գտնւում է ուսումնարանական գործերում: սրանց և մնացածներից շատերին դպրոցն է տուել դասական պիտոյքները. միքանիսն էլ հէնց իրանք են հոգացել. Օրիորդաց լրացուցիչ Գ. դասարանում մնացող երկու աշակերտուհու վերաբերմամբ Վարչութիւնը կարգադրեց այսպէս. քանի որ յաջորդ տարում այդ տեսակ բաժանմունք չի լինիլ, դրա համար էլ յիշեալ 2 աշակերտուհուն տուեց ոչ թէ աւարտման, այլ այնպիսի վկայագիր, որի մէջ յիշուած էր, թէ նրանք անցել են 4-րորդ տարեայ դասընթացն և լսել են Բ. ու Գ. դասարաններում

Քննութիւնների ու թւանշանների ոչնչացնելը ունեցել է շատ լաւ ազդեցութիւն աշակերտ-աշակերտուհիների վրայ. այս տարի անցեալ տարւայ համեմատութեամբ փոխւողների թիւը 10 տոկոսով աւելի է. բժշկական քննութիւնները միմեանց հետ համեմատելով՝ այս տարի կողմով, յիշողութիւններով թոյլերն աւելի քիչ են և այլն: Աշակերտ-աշակերտուհիների մէջ նկատւում էր աչքի ընկնող հարցասիրութիւն ու բուռն հետաքրքրութիւն. անյագ ձգտում կար սովորել զարգանալու համար. բարձր դասարանցիները դարձեալ շարունակում էին իրանց աշխատանքը մանկական գրադարանը հարստացնելու: Տղայոց Բ. ու Գ. դասարանցիները առանձին առանձին ընկերութիւններ կազմեցին ընտանեկան դասախօսութիւնների համար. շաբաթը մի անգամ ուսուցիչներից մէկի ներկայութեամբ հաւաքւում և դասախօսում էին իրանց մատչելի նիւթերի մասին. դեռ սկիզբ լինելով՝ դժուար է մի բան ասել, միայն այսքանն է յայտնի, որ գիտեն վիճաբանութիւնները կանոնաւորապէս տանել. աշակերտական գրականանդէսը աւելի հետաքրքրական ու բազմակողմանի դարձրին. այնքան էին շարժւել, որ հակալկոլական ու հակածխական ընկերութիւն կազմեցին:

## 2. ՑԱՆԿԱԼԻ ԴՐՈՒԹԻՒՆ

Հաւատացած եմ, որ ազնիւ աշխատանքը, անկեղծ գործունէութիւնը հրաշքներ կարող է կատարել. դրա հետ միասին հարկաւոր է ժամանակ-ժամանակ. ինչպէս դպրոցի հայաթների անյարմարութիւնները մեծ մասով ոչնչացան, այնպէս էլ ժամանակի ընթացքում աշակերտական սեղաններն ևս կարգի կը բերուեն. Դպրոցը նիւթապէս անապահով վիճակի մէջ է. միայն և մի՛միայն Հոգաբարձութեան եռանդուն աշխատանքը և ուսուցչական խմբի



զիջողութիւնն ու անձնուէր գործունէութիւնն են պահպանում նրան: Չնայած այդ դրութեանը, մի քայլ ևս պիտի անել, այն է առաջարկում եմ յաջորդ ուսումնական տարում բաց անել Տղայոց Չորրորդ Դասարան. սրանով միայն կարող ենք հասարակութեանը տալ համեմատաբար աւելի խելացի ու պատրաստուած մարդիկ. միանգամայն վստահ եմ, որ Հոգաբարձութիւնը այդ մեծ ու համակրելի քայլն էլ կ'անէ:

'Ի դիմաց մանկավարժական ժողովի
Տեսուչ Տիգրան Ռաշմաճեան

28 Մայիս 1900
Թաւրիզ

Թաւրիզի Լիլաւա-Թաղի „ՀԱՅԿԱԶԵԱՆ“ և „ԹԱՄԱՐԵԱՆ“ երկսեռ դպրոցների 1900-1901 ուսումնական տարւայ

# ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Դպրոցներիս Վարչութիւնը բոլորեց երեք ուսումնական տարի. անցած երկու տարում կատարւած փոփոխութիւնները արդէն յայտնի կը լինին նախընթաց տեղեկագրերից. ներկայում եղածն էլ կը տեսնենք աստիճանաբար և մի ամփոփ գաղափար կը կազմենք ամբողջութեան մասին: Այս ուսումնական տարին սկսւեց բաւականին խոշոր նորութիւնով. չնայած դպրոցների նիւթական անապահով վիճակին՝ Հոգաբարձութիւնը բաց արաւ Տղայոց Չորրորդ դասարան և Օրիորդաց Բ. դասարանն էլ զատեց Ա. դասարանից, որ ուրիշ ժամանակ միացած էին: Հոգաբարձութեան կողմից արւած այս համակրելի ու ծափահարութեան արժանի քայլը՝ նրան նոր հոգսերի, նոր մտածումների դուռ էր բաց անում. այդ բանը գիտէր նա, գիտէր և ուսուցչական խումբը. բայց ձեռք-ձեռքի տւած, փոխադարձ աջակցութեամբ, փոխադարձ զիջումներով առաջ տարան մի գործ, որը պահանջում էր հասարակութեան օգուտը՝ ապագայ սերնդի յառաջդիմութիւնը:

## 1. Ուսումնական տարւայ սկիզբը.

Նորեկ աշակերտ-աշակերտուհիների ընդունելութիւնը սկսւել է 1900 թ. Սեպտեմբեր 4-ին: Խնդրատուներ եղել են յիսունվեց (56). սրանցից մի քանիսը կամ յետ են կացել կամովին, կամ տարիքի համապատասխան պատրաստականութիւն չունենալու պատճառով մերժւած են. մնացածները ընդունւել են հետեւեալ բաժանմունքները.—

| Օր. Թումանեան դպրոց | | |
|---|---|---|
| I տարի | (ա. բաժ.) | 19 աշ.-ուհի |
| II „ | (բ. բաժ.) | 4 „ |
| III „ | (գ. բաժ.) | 2 „ |
| | | 25 |
| 99/1900 ուս. տ-ից | | 79 |
| | | 104 աշ-ուհի |

| Տղայոց Հայկազեան դպրոց | | |
|---|---|---|
| I տարի | . . | 13 աշակերտ |
| II „ | . . | 3 „ |
| II „ | . . | 4 „ |
| IV „ | (ա. դաս.) | 1 „ |
| V „ | (բ. դաս.) | 1 „ |
| VII „ | (գ. դաս.) | 1 „ |
| | | 23 |
| 99/1900 ուս. տր-ից | | 127 |
| | | 150 աշակերտ |

Երկսեռ դպրոցներում սովորող աշակերտ-աշակերտուհիների թիւը տարւայ սկզբում 254 էր: Այս տարի „Հայկազեան" դրպ. բոլորը ունէր եօթնամեայ դասընթաց, իսկ „Թումանեան"ը հնգամեայ, այսպէս երկուսում կար ընդամէնը 12 բաժանմունք:

Նորեկների ընդունելութիւնը թեթևացաւ մինչև 1900 թ. Սեպտեմբեր 17-ը. այդ ժամանակ արդէն բոլոր ուսուցիչները էլ տեղ հասած էին. ուստի Սեպտեմբեր 19-ից դասերն սկսւեցին կանոնաւորապէս:

1. Ուսուցչական խումբ

Դասատուների թիւը տեսչի հետ միասին տասներեք (13) է: 1900-1901 ուս. տարում առարկաները բաժանւած էին այսպէս.—

| Դասատուներ | Աւանդելի առարկաներ | շաբ. դ. թ |
|---|---|---|
| 1.) Պ. Սիրաք Գրիգորեան | Թւաբ. Ալգեբ. Երկրչ. Աշխ. ընդ. պ. | 25 |
| 2.) „ Արտաշէս Դարբինեան վերակացու | | 26 |
| | Կրօն, Հայոց լեզու և թւաբանութ. | 17 |
| 3.) Տ. Հայկանուշ Դարբինեան. | Գծագրութիւն և Ձեռագործ | |
| 4.) Պ. Միքայէլ Ջառաֆեան բարտուղար | Կրօն Հ. լեզ. Ֆրանս. Թւբ. աշխ. և գր. | 26 |
| 5.) „ Արշակ Մեհրաբեան Գրադարանապետ | Հ. լեզու Թւաբ. խմբ. երգ. Ձայնգր. և բնն. ընթերցանութիւն | 21 |



| Դասատուներ | Աւանդելի առարկաներ | շաբ. դ. թ |
|---|---|---|
| 6.) Պ. Մարտ. Ցարութիւնեան. | Հայոց լեզու և Ռուսաց լեզու | 24 |
| 7.( „ Սեդրակ » | Հայոց լեզու և գծագրութիւն | 25 |
| 8.) „ Միրզա Սամադ | Պարսկերէն | 16 |
| 9.) „ Ալէք. Տ. Ցարութիւնեան. | Հ. լեզ. Հ. պատմ. եկղ. պատմ. և երգց. | 23 |
| 10) „ Դօկ. Կարպ. Փաշայեան | Ֆրանսերէն . . | 5 |
| 11) „ Երւանդ Ֆրանգեան վերակացու | Հ. լեզու Թւաբ. Հայրենագիտութ. և աշխարհագրութիւն | 24 |
| 12) Տ. Աստղիկ Ռաշմաճեան | Կրօն, գծագրութիւն և Ձեռագործ | 13 |
| 13) Պ. Տիգրան „ | Կենդանաբան. բուսաբ. մարդկազ. և բնախօս. տարրկն. քիմիա և ֆիզ. | 19 |
| | | 264 |

Ցանկալի չէր, որ ինքս այդքան ծանրաբեռնւած լինէի, բայց ուրիշ հնարաւորութիւն չկար:

Յարգելի պատճառներով չպարապած դասերի թիւն է խնասուներ (96): Պարսկերէնի դասատու պ-ն Միրզա Սամադը հիւանդութեան պատճառով չկարողացաւ մինչև տարւայ վերջը պարապել. նա ստիպւեց թողնել իր դասերը. ոչ մի պարապ ժամ չմնաց. Օտակի արձակուրդին անմիջապէս նրա փոխարէն հրաւիրւեց պ-ն Միրզա Մուհամմէդ Ալի խանը, որը իր պարապմունքն սկսեց 1901 թ. Ապրիլ 10-ին:

Ամբողջ տարւայ ընթացքում եղել է քառասունչորս (44) մանկավարժական ժողով. բացի պ. պ. Դօկ. Կ. Փաշայեանից և պարսկերէնի ուսուցչից, միւս դասատուները բոլորը մասնակցել են նիստերին. բացակայել են շատ քիչ:

Յիշեալ ժողովներում ընթացիկ խնդիրների հետ միասին տրւել են հետևեալ կարգադրութիւնները.—

ա.) Նախկին տարիների նման ընթերցանութեան դաս լինում էր շաբաթ օրերում. միայն զանազանութիւնը այն էր, որ այս տարի III և IV տարւայ աշակերտ-աշակերտուհիները [illegible] շաբաթը [illegible] ընթերցանութեան դաս և երկու շաբաթը մի անգամ էին գիրք ստանում գրադարանից. ընդհակառակը բարձր բաժանմունքները երկու շաբաթը մի անգամ ունէին ընթերցանութեան դաս, բայց գրադարանից գիրք էին վերցնում ամէն շաբաթ:

բ.) Ինկատի առնելով՝ որ այս տարի Տղայոց Դպրոցը մի դասարանով բարձրացաւ, դրա համար Վարչութիւնս յարմար դատեց Փրանսերէնը սկսել Բ. դասարանից և ոչ թէ Ա. դասարանից ինչպէս առաջ: Շատ հասկանալի է, որ այս տեսակ տարրական դպրոցում ցանկալի չէ երեք օտար լեզուի դասաւանդումը. բայց այս բանը թոյլ է տուել դպրոցը կեանքի պահանջից դրդուած:

գ.) Երկսեռ սաների համազգեստը շատ թեթև ու անհրաժեշտ փոփոխութիւն կրեց. աշակերտներին խորհուրդ տուեց փոխանակ մորթեայ գլխարկի ծածկեն անգլիական „ժօկէ“ առած գլխարկը, որը գոնէ յարմարութիւն ունի արեգակի ճառագայթներից ու գլուխը լոյսից աչքերը պաշտպանելու: Այս նոր գլխարկը իր յարմարութեամբ և գուցէ մի քիչ էլ գեղեցկութեամբ շատերի կողմից ընդունելութիւն գտաւ: Աշակերտուհիներին էլ առաջարկեց գլխակալի փոխարէն գլխանոց (բաշլըղ) ունենան, որը նոյնպէս շատ տարածուեց. միայն պիտի ասել, որ գլխանոցը յարմար է ցուրտ եղանակներին:

դ.) Անցեալ տարւայ նման տետրակներ, մատիտներ և գրչակոթեր թողնում էին դպրոցում. սակայն այս տարի իւրաքանչիւր դասարան մի արկղ, կամ պահարան և կամ գզրոցով սեղան ունէր այդ իրեղէնները պահելու համար: Թանաքը դարձեալ դպրոցն էր մատակարարում. Թիթեղեայ թանաքամանները վերացուեցին, քանի որ ոչ միայն թանաքը լաւ չէին պահում, այլ և շուտ ժանգոտելով փչանում էին. նրանց փոխանակ գործ էին ածւում այս տարի ապակեայ թանաքամաններ, որոնք նոյնպէս պահւում էին դասարաններում:

ե.) Եթէ չասենք բոլոր դպրոցներում, գոնէ շատերում ընդունուած է, որ իւրաքանչիւր դասարան ունենայ իր օրապահը. սրա պարտականութիւնը այն է, որ գրատախտակը մաքրէ, պատրաստի կաւիճ պահէ և լուսամուտները բաց անէ օդը մաքրելու համար. բացի դրանից նա պիտի հսկէ դասարանում եղած դասական պիտոյքների վրայ. եթէ մի որ և է բան կորչի, նա է պատասխանատուն: Օրապահներին սկսում են մի տեսակ իշխանութիւն բանե-



ցնել իրանց ընկերների վրայ. դասամիջոցներին երբեմն մի քանիսին թողնում են դասարան մնալու, իսկ ուրիշներին ոչ. մանաւանդ այս բանը պատահում է ձմեռ ժամանակ. սրանից առաջ է գալիս աշակերտ-աշակերտուհիների մէջ նախանձ, ատելութիւն, մինչև անգամ թեթև կռիւներ: Առաջի երկու տարին Վարչութիւնս որքան կարողացել է, աշխատել է այդ տեսակ անհամութիւնների առաջն առնել. միևնոյն ժամանակ հետևում էր նոր-նոր միջոցներ գտնել այդ օրապահական չարիքի առաջն առնելու: Ուսուցչական խմբի քննած ընթացքի շնորհիւ գրեթէ բոլորովին չքացան դասարաններից բան կորելու դէպքերը. երկու տարուց աւելի է, որ այդ բանը անյայտացել ու անյայտացել է. ոչ միայն այս, այլ մինչև անգամ շատ դէպքեր են պատահել, երբ աշակերտ-աշակերտուհիները գրչակոթ, մատիտ, ռետին, գնդակ, դանակ, երբեմն էլ փող են գտել կամ հայաթում, կամ դասարանում, իսկոյն ներկայացրել են դասատուներից մէկն ու մէկին տիրոջը յանձնելու համար: Չնայած սրան՝ Վարչութիւնս սկսեց բարձր դասարաններից օրապահութեան մէջ փոփոխութիւն մտցնել այսպէս.— օրապահները դասամիջոցին դասարաններում չպիտի մնան. հէնց դասը վերջանալու պէս ուսուցչի ներկայութեամբ օրապահը պիտի գրատախտակը մաքրէ, լուսամուտը բաց անէ, եթէ կարիք կայ, և յետոյ միւսների հետ դուրս գնայ և նրանց հետ էլ դասարան վերադառնայ. երկու երեք ամսւայ փորձը ցոյց տուեց, որ շատ գլխացաւանքից ազատուել են և՛ փոքրերը, և՛ ուսուցչական խումբը. դասարանում օրապահ չմնալու պատճառով երբէք գանգատ չլսուեց, թէ այս կամ այն բանը կորած է. այս հանգամանքը նկատի առած՝ ընդունուեց, որ բոլոր դասարաններում օրապահներ չմնան դասամիջոցին:

զ.) Սովորաբար դպրոցներում ընդունելութիւն է լինում տարւայ սկզբին և կիսին. սակայն Վարչութիւնը յարմար դատեց, որ գրադէտները տարւայ ամէն ժամանակին կարող են մտնել դպրոց, եթէ պատրաստ են տարիքի համապատասխան բաժանմունք մտնել և շարունակել:

է.) Տուն տարած ընթերցանութեան գրքերը վերադարձնելիս անցած երկու տարւայ նման աշակերտ-աշակերտուհիները իրանց կարդացածի մասին հաշիւ էին տալիս. այս տարի այն զանազանութիւնը կար, որ գրադարանից գիրք ստացող իւրաքանչիւր դասարան ղեկավարւում էր իր դաստիարակի ձեռքով. եթէ դաստիարակի համար մի որ և է անյարմարութիւն լինէր, նրան կը փոխարինէր մի ուրիշ դասատու: Ընթերցանութեան գրքերը ղեկավարող դասատուի պարտականութիւն էր իրան յանձնուած աշակերտ-աշակերտուհիների տեմպերամենտ ու բնաւորութիւնը ճանաչել, մօտիկից ծանօթանալ. սրանով միայն կարելի էր նրանց հակումները դիտել և նոյն հակումների համապատասխան ուղղութիւն տալ ընթերցանութեանը. այս ճանապարհով աշակերտ-աշակերտուհին աւելի ազատ կ'զգային իրանց ձգտումներին բաւարարութիւն տալու հարցում 'ի հարկէ առանց չափազանցութեան մէջ ընկնելու. ընթերցանութեամբ ձեռք բերած զարգացումը կը լինէր աստիճանաբար և անհատականապէս ճնշուած չէին լինիլ, այլ կը դիմէին իրանց ցանկալի նպատակին հմուտ ղեկավարի շնորհիւ: Մի տարով այս ուղղութեան ազդեցութիւնը այնքան զգալի չի դառնալ. խնդիրը բարդ է և աւելի երկար ժամանակի է կարօտ.

Դպրոցի յառաջադիմութեան համար ուսուցչական խումբը ոչ ինչ չէ խնայել. անցեալ տարւայ նման եղել են աշակերտական գրական-առաւօտներ. բացի դրանից այս տարի էլ շաբաթական մի անգամ ռուսերէնի փորձնական դասեր. եղել է 15 փորձնական դաս, որից ինն (9) աւելի ժամեր են:

Շաբաթ օրւայ ընթերցանութեան դասեր տեղի են ունեցել քսանչորս (24) շաբաթ 93 ժամ պարապմունքով: Այստեղ 'ի դէպ է ասել, որ 98|99 և 99|1900 ուս. տարւայ Տեղեկագրերում ընթերցանութեան դասերի թիւը սխալմամբ նշանակած է միմիայն շաբաթով — եթէ դուրս գանք շաբաթների թիւը, այն ժամանակ առաջի և երկրորդ տարում ընթերցանութեան պարապմունք եղել է 70 ժամ. սրանք պարտադիր դասեր չէին ուսուցչական խմբի համար. նա չփախաւ այդ աշխատանքից, քանի որ հա-



մտցուած էր, թէ դա անհրաժեշտ է մատաղ սերնդի կրթութեան համար:

Յիշած աւելի ժամերը միայն հաշուելով կ'ստանանք 172. սրանից դուրս գալով չպարապած 96 դասը՝ աւելի կմնայ 76, որը ծածկում է անցեալ ուսում. տարւայ բաց մնացած դասերը: Պետք չեմ ասում, որ շատ անգամ ընթերցանութեան դասը մի ժամով (¾ տեւողութեամբ) չէր վերջանում. ժամանակը լրանալուց հանգիստ էր տրւում և յետոյ դարձեալ պարապմունքը շարունակւում էր մի ժամ էլ:

### 3. Աշակերտ-աշակերտուհիների վիճակը.

Երկսեռ սաների կրթութեանը զարկ տալու համար դարձեալ շարունակել է անցեալ տարիների նման նրանց ընտանեկան ու անհատական դրութեան ուսումնասիրութիւնը: Այս տարի ձեռնարկուեց աշակերտ-աշակերտուհիների սննդի մասին տեղեկութիւններ հաւաքելը. այս վիճակագրութեան նպատակը պիտի լինէր ցոյց տալ, թէ օրական քանի անգամ են ուտում, ինչ տեսակ կերակուր և թէ որքան ձեռնտու է նրանց սնունդը. դժբախտաբար ճիշտ տեղեկութիւններ հաւաքելը բաւականին դժւար էր և մինչև անգամ շատ դէպքերում գրեթէ անկարելի. ուստի այդ միտքը, որ քիչ մասով իրագործուած էր, մնաց իր ամբողջութեամբ անկատար մեզանից անկախ պատճառով. անկասկած ապագան կը շարունակէ այդ գործը:

Վարչութիւնս իր սովորութեամբ ժողովների հրաւիրեց ծնողներին ու խնամակալներին, որին կարող էին ներկայ գտնուել և կողմնակի մարդիկ. աշակերտ-աշակերտուհիներին և դպրոցին վերաբերեալ խնդիրների մասին իւրաքանչիւր մարդ ազատ իրաւունք ունէր խօսել և վիճաբանել. կրկնում եմ, այդ իրաւունքից ոչ ոք չօգտուեց: Այս տարի ևս պէտք կար բժշկական քննութեան. Դոկ. Ա. Փաշայեան դպրոցական բժշկի պաշտօնը ներկայ ուսում. տարում էլ ձրիաբար կատարեց. այս տեսակ մարդասիրական վերաբերմունքի համար Վարչութիւնս իր խորին շնորհակալութիւ-

նըն է յայտնում յարգելի բժշկին:

Բժշկական քննութեան ենթարկուած են 93 աշակերտուհի և 148 աշակերտ. մի քանիսը կամովին հեռացած են դպրոցից: Քննութեան արդիւնքն է հետևեալը.—

| Օրիորդաց Թումանեան դպրոց | | | Տղայոց Հայկազեան դպրոց | | |
|---|---|---|---|---|---|
| Առողջութիւն | թուով | տոկոս | Առողջութիւն | թուով | տոկոս |
| լաւ . . | 51 | 54,83 | լաւ . . | 82 | 58,15 |
| միջակ . . | 37 | 39,79 | միջակ . . | 51 | 36,17 |
| տկար (թոյլ) | 5 | 5,38 | տկար . . | 8 | 5,68 |
| Տեսողութիւն | | | Տեսողութիւն | | |
| լաւ . . | 33 | 94,28 | լաւ . . | 56 | 66,67 |
| միջակ . . | 2 | 5,72 | միջակ . . | 27 | 32,14 |
| տկար . . | — | — | տկար . | 1 | 1,19 |

Ներկայ ուսում. տարում ընդունուած աշակերտ-աշակերտուհիները մեծ մասով կազմի կողմից այնքան նախանձելի դրութիւն չէին ներկայացնում. բացի սրանից այս տարով թէ՛ դիֆտերիտը և թէ՛ մի քանի անհատների վերաբերմամբ էլ ժառանգական հիւանդութիւնն ու թոյլ կազմուածքը չէին կարող անհետեւանք անցկենալ. շատ մասով հէնց այս պարագաներին կարելի է վերագրել կազմերի տոկոսների փոփոխութիւնը, որ բոլորովին կախում չէ ունեցել դպրոցական պայմաններից: Նոյն բանը հաստատում է այս տարուայ հսկայական յառաջադիմութիւնը յիշողութիւնների վերաբերմամբ, որ նախկին տարիների համեմատութեամբ տասնեակ տոկոսներով դէպի լաւն է գնացել: Նոյն իսկ կազմով թոյլ ու ջղային երեխաներ անհամեմատ աւելի լաւացել են, կազդուրուել. անուն-անուն յիշել շատ հեռուն կը տանէր մեզ. մանրամասնութիւնը կարելի է գտնել դպրոցական գործերում: Կարծում եմ, վստահ կերպով կարելի է ասել, որ շատ մասով դպրոցի



դուրս պիտի որոնել աշակերտ-աշակերտուհիների առողջութեան խանգարող պայմանները:

Յիշողութեան համար փորձի են ենթարկուած Գ. բաժանմունքից սկսած դէպի բարձրը և այն էլ 1901 թ. Մայիս 16-ին, ասել է ուսումնական տարուայ վերջին. կազմերի քննութիւնն սկսուել է 1901 թ. Մարտ 6-ին և վերջացել է Ապրիլին:

Աշակերտ-աշակերտուհիների ֆիզիկական կրթութեանը պիտի նպաստէին նաև խաղերն ու զբօսանքները: Ի նկատի առնելով այստեղի ընտանեկան փակ կեանքը, որ ամենից աւելի կանացի սեռին է ենթարկում զրկանքներին մտապաշարի կողմից, Վարչութիւնս լաւ համարեց դպրոցական զբօսանքներին աւելի լայն բնաւորութիւն տալ, մանաւանդ աշակերտուհիների նկատմամբ. սրանց երբեմն տանել ուշադրութեան արժանի տեղեր ցոյց տալու. բաղարով անցնելիս առիթ կ՚ունենան փոքրիկ արհեստանոցներ, առևտրական դուքաններ տեսնել. հէնց մի անգամ այդ տեսակ զբօսանք եղաւ. երկու վարժուհի և մին ուսուցիչ առաջնորդում էին 20 աշակերտուհու. սրանք հայ արհեստանոցում տեսան Ռուսաստանից նոր բերուած էլեքտրական զանգակով կառքեր, յաղթանդամ ձիեր. տեսան արհեստանոցը իր գործունէութեան մէջ. ականատես եղան երկաթը կեծացնելիս և թակելիս. այս բոլորը նրանց համար շատ հետաքրքիր նորութիւններ էին: Զբօսանքն էլ կատարուել է ոչ թէ բաղարով, այլ բաղարից դուրս եղած փողոցներով:- Ի՞նչ հրեշաւոր սուտեր ասէք, որ չսարքեցին. խելքը գլխին մի երկու հայր եկան դպրոց և կարծեմ, որ Վարչութեան բացատրութիւնից գոհ մնացին, համոզուելով թէ՝ դա փաստաւոր բան չէ: Չար լեզուներ անպակաս են. շատ զրպարտութիւններ, շատ բամբասանքներ լսել են Հոգաբարձութիւնն ու Վարչութիւնս, գիտնալով թէ նրանք ինչ պղտոր աղբիւրից են դուրս եկել՝ միշտ արհամարհել անցել են: Վերջերս այնպիսի ստոր զրպարտութիւններ տարածուեցին ուսուցչական խմբի հասցէին, որ մարդկային խիղճ ունեցող իւրաքանչիւր անհատ լսածի պէս կ՚ասէր, թէ դա կեղտոտ բամբասանք է, ուրիշ ոչինչ: Ուսուցչա-

կան խումբը երբեք նշանակութիւն չունեց. բայց դպրոցի պատիւը բարձր պահելու, պղտորւած մտքերը պարզելու և ստորաքարշ արարածներին հալածելու համար՝ 1901 թ. Մայիս 5-ին տե-ղիս առաջնորդարանում գումարեց հասարակական սահմանա-փակ ժողով, ուր ներկայ էին երկու թաղից վէճ ունեցող ան-կողմնակալ մարդիկ. ժողովի հրաւիրւած էին և այն երեք անձ-նաւորութիւնք, որոնք յանդգնել էին այստեղ և այնտեղ խօսել ասել ուսուցչական խմբի հասցէին զանազան զրպարտութիւններ. ամենագլխաւորն այն է, որ պարծեցել էին, թէ իրանք ականատես էն եղել և փաստերով կ'ապացուցանեն. մինչդեռ ժողովում բոլո-րի առաջ երեքն էլ խոստովանեցին, որ իրանք սուտ են ասել զրպարտել են. իսկոյն արձանագրութիւն կազմեց, որի տակ ստո-րագրեցին Առաջնորդական տեղապահը և միւս ներկայ գտնւող-ները. այս արձանագրութիւնը պահւում է դպրոցում: Սրանից էլ փառաւոր ապտակ չէ կարող լինել թէ՛ այս զրպարտիչներին և թէ՛ անկիւններում խօսող մարդկանց. դպրոցը կարող էր այդ հրէշա-ւոր ստախօսներին պատժել տալ ամենախիստ կերպով. բայց նա որպէս կրթութեան տաճար՝ բարձր ու բարձր կանգնեց, նրանց ներեց և բաւականացաւ մի՛ միայն նրանով, որ հիմնարկութեան պատիւը վերականգնեց:

Այս տարի Մանկական Գրադարանը շատ աւելի հար-ստացաւ նւէրներով, որ պակաս չլինի նպաստել աշակերտ-աշա-կերտուհիների յառաջադիմութեանը: Այժմ գրադարանում կայ 965 կտոր գիրք. բոլոր նւիրատուներին, թէ գրքերով և թէ պար-բերական հրատարակութիւններով, Վարչութիւնս իր խորին շնորհակալութիւնն է յայտնում:

Գրքերը կազմել տալուն և այս տարի էլ մի յարմարաւոր պահարան շինելուն բաւականին ծախքեր են գնացել. սրանց մա-նրամասն հաշիւը պահւում են դպրոցական գործերում. իսկ բոլոր գրքերի ցուցակը մի թերթի վրայ առանձին տպւած այս տեղե-կագրին է միացւում:



Ինչ վերաբերում է, երկսեռ սաների ուսման ընթացքին, Վարչութիւնս անցած տարիների նման մի կողմ է շպրտած եղել թէ՛ քննութիւններ և թէ՛ թւանշաններ: Փոխադրութիւնն ու մնալը կատարւել է տարեկան աշխատանքի համաձայն այսպէս.

**Օրիորդաց Թումանեան դպրոց**

| | Ընդ. թիւ | Մնում է | Փոխւում |
|---|---|---|---|
| 1 տարի հիմ. և Զ. | 21 | 8 | 13 |
| 2 „ „ „ | 35 | 16 | 19 |
| 3 „ . . | 16 | 6 | 10 |
| 4 „ . . | 15 | 3 | 12 |
| 5 „ . . | 6 | 2 | 4 |
| | — | — | — |
| | 93 | 35 | 58 |
| Տոկոսի վերածած | | 37,63 | 62,37 |

աւարտում են . . 4 աշ-ուհի

Թոշակ. աշ-ուհի 65. 65,70 %
Ձրիվրժ. „ 34. 34,30 %

**Տղայոց Հայկազեան դպրոց**

| | Ընդհ. թիւ | Մնում | Փոխւում |
|---|---|---|---|
| 1 տարի Հ. և Զ. | 18 | 5 | 13 |
| 2 „ „ „ | 30 | 12 | 18 |
| 3 „ . . | 36 | 21 | 15 |
| 4 „ . . | 18 | 3 | 15 |
| 5 „ . . | 15 | 4 | 11 |
| 6 „ . . | 8 | 1 | 7 |
| 7 „ . . | 10 | — | 10 |
| | 135 | 46 | 89 |
| Տոկոսի վերածած | | 34,07 | 65,93 |

և . . . 10 աշակերտ

Թոշակ. աշակերտ 96. 67,10 %
Ձրիվրժ. „ 47. 32,90 %

Այս տարւայ ընթացքում 4 աշակերտ-աշակերտուհի մեռել են դիֆթերիտից, 23-ն էլ կամովին դուրս են եկել դպրոցից՝ մի քա-նիսը գնացել են Կովկաս սովորելու, ոմանք թոշակը չբերելու պատճառով և այլն. ուսում. տարւայ վերջում կար 93 աշակերտուհի և 135 աշակերտ:

Ձրիավարժ 14 աշակերտուհի և 21 աշակերտ Թաւրիզի Հայուհեաց Բարեգործ. ընկերութիւնից ստացել են հագուստ և ոտնակեղէն. այս օժանդակութեան համար դպրոցիս Վարչու-թիւնը իր խորին շնորհակալութիւնն է յայտնում յարգելի Ընկե-րութեանը:

Առհասարակ բոլոր ձրիավարժ աշակերտ-աշակերտուհի-ների դասական պիտոյքը դպրոցն է հոգացել:

Ներկայ ուսում. տարում էլ աշակերտ-աշակերտուհիների

մէջ նկատւում էր աչքի ընկնող հարցասիրութիւն և հետաքրքրութիւն. սխալած չեմ լինի, եթէ ասեմ, որ նրանց տարիքի համապատասխան այդ բանը արդէն իր գագաթնակէտին էր հասել. սովորել, անվերջ սովորել ցանկանալը, կեանքի համար պատրաստուելը, ահա այս էր բոլորի անյագ ձգտումը: Գործնական շարունակում էին նրանց ընկերութիւններով հարստացնել Մանկական Գրադարանը. դպրոցի ամսագիրը աւելի հետաքրքիր ու բազմաբովանդակ դարձաւ. ընտանեկան դասախօսութիւնները համեմատաբար աւելի մեծ եռանդով էին շարունակւում. շատ դասախօսութիւնների ու վիճաբանութիւնների ներկայ գտնուելով՝ դէպի փոքրերը՝ այդ կենսունակ ոյժերը իմ սէրն ու յարգանքը չափից դուրս գործեցաւ. խօսը ոչ միայն մխիթարւում էր, այլ և ոգեւորւում, տեսնելով նրանց օրինակելի ընկերական կարգապահութիւնը, ողջմտաբար վիճել և ամբողջութեան համար եզրակացութիւններ անելը: Իսկ բոլորը ցոյց էին տալիս, որ նրանք գիտեն կարդացած գրքերից ինքնուրոյնաբար քաղուածքներ անել, օգտուել անձնական փորձառութիւնից ու դիտողութիւնից: Ընցեալ տարի աշակերտուհիները չունէին այս տեսակ ընկերութիւն. այս տարուայ սկզբում միայն լսում էին դպրոցում կատարւող տղաների դասախօսութիւնները. յետոյ նրանք էլ սիրտ արին դասախօսութիւններ կարդալ և վերջերում առանձնապէս աշակերտուհիներն էլ ընկերութիւն կազմեցին:

4. Մի հայեացք երէք տարուայ գործունէութեան վրայ.

ա.) Երեք տարուայ փորձը ցոյց տուեց, որ դպրոցի հայաթում մասնաւոր բնակութիւնը շատ է խանգարում. ժամհօր բնակարանը պիտի կտրուած լինի հայաթից և միայն մի դուռ ունենայ անհրաժեշտ դէպքում ել ու մուտ անել և հսկել. նրա ընտանիքի անդամների և երթևեկող հիւրերի անցուդարձը պիտի լինի փողոցի դռնով:

բ.) 1898-1901 ուս. տարիներում գործող Հոգաբարձութեան և ուսուցչական խմբի ժամանակ երկսեռ դպրոցների հայաթները



կարգի բերուեցին. դպրոցը ունեցաւ Աշխարհի քարտէզները:

գ.) Անհետացաւ թւանշանների ու քննութիւնների վնասակար սիստեմը:

դ.) Ներկայ ուս. տարուայ սկզբից առաջի բաժանմունքների համար շինուեցին համեմատաբար աւելի կանոնաւոր ու առողջապահիկ նստարաններ. որանով աստիճանաբար փոփոխութեան հիմք դրուեց:

ե.) Դպրոցում գործեր չկային. այժմ թողնւում են դպրոցում երէք տարուայ Օրագրական մատեանները, յառաջադիմութեան ցուցակները, բժշկական քննութիւններ, դպրոցական վիճակագրութիւն, մանկավարժական ժողովների արձանագրութիւնները, երկսեռ սաների ազգանուան ցուցակները, անցած նիւթերի ծրագրերը, նամակագրութիւնները, շաբաթ օրուայ ընթերցանութեան գրքերի ցուցակները, նոյնպէս փորձնական գործերը: Կազմուել է փոքրիկ Ֆիզիկանոց անհրաժեշտ մի քանի գործիքներով տեղական պատրաստութեամբ. ապակեայ խողովակներ և փորձերի համար նիւթեղէններ (կալիում, նատրիում մետաղներ, ծծմբաթթու եայլն). կան 12 հատ լուսանկարչական պատկեր, որոնցից 11-ը 1898-99 ուս. տարում դասարան-դասարան նկարուած աշակերտ-աշակերտուհիները և ուսուցչական խումբն է, իսկ մէկն էլ ներկայ տարում գործող Հոգաբարձութեան և ուսուցչական մարմնի խմբական պատկերն է մի թերթի վրայ:

զ.) Մեծ նուիրութիւններով կազմուած է Մանկական Գրադարան, ուր այժմ գտնւում է մի նոր և մի հին պահարան բոլոր գրքերի մանրամասն ցուցակների հետ միասին:

է.) Անհետացել է միացած դասարանների սիստեմը:

ը.) Տղայոց դպրոցը Բ. դասարանից հասել է մինչև Դ. դաս-նի:

Սրանց հետ միասին եթէ աչքի առաջ ունենալ, թէ գործունէութեան սկզբից որքան օգտակար ու անհրաժեշտ փոփոխութիւններ են արուած դասաւանդման մեթոդի և առհասարակ աշակերտական պարապմունքների մէջ, այն ժամանակ մասամբ պարզ կը լինի, թէ որքան զբաղուած է եղել խումբը և որքան եռանդ է թափել իր սիրած, պաշտած գործը լաւ ու հաստատուն հիմքերի

վրայ դնելու համար:

Երեք տարւայ փորձից դուրս եկաւ, որ բոլորովին զուր է բազմամարդ բաժանմունք ունենալը. ժամանակի մեծ մասը դրւ-թէ կարգապահութեան վրայ է կորչում. ուստի այդ է պատճառներից ամենագլխաւորը, որ տղայոց III տարւայ աշակերտներից համեմատաբար քիչ տոկոս է փոխադրւում:

Այսքան ծանրութիւններ ու դժւարութիւններ տանելուց և գործը այս վիճակին հասցնելուց յետոյ, ամենից նպատակայարմար կը լինի չորրորդ դասարանցիներին ձեռքից չթողնել և յաջորդ ուսումնական տարում բաց անել Ընդհանուր Դասարան: Այդպիսի Հոգաբարձութիւնը ինչ տեսակ անհատներից էլ որ կազմւած լինի, Ալիւսայի հասարակութիւնը նրանց պիտի թէ ու թիկունք հանդիսանայ այս գովելի ու անհրաժեշտ քայլն էլ անելու. բաւական է, որքան մուրացկանութիւն է անում Արպատականը անձնւէր գործիչների համար. հէնց թող Ալիւսայի դպրոցները տան ապադայ քաղաքացիներ, ուսուցիչներ և առհասարակ բարեկիրթ քաղաքացիներ: Փորձերը ցոյց տւին, որ այդ հսկայական քայլը կարող է անել Ալիւսան: Ներկայ խումբը թէկուզ այստեղ էլ չլինի, բայց եթէ այդ միտքը իրագործւած տեսնի, չափից դուրս կ'ուրախանայ և կը մխիթարւի:

'ի դիմաց մանկավարժական ժողովի
Տեսուչ՝ Տիգրան Բաշմաճեան

1 Յունիս 1901
Թաւրիզ



Ալիւսայի Դպրոցների „Մանկական“ Գրադարանում եղած գրքերի ցուցակը

1

Աշակերտական գրադարան

| գրքի համր № | |
|---|---|
| 1 | Մոխրատիտիկ 2 օրինակ |
| 2 | Քնած գեղեցկուհի 2 օրինակ |
| 3 | Գուլլիվէրը հսկր. աշխարհ. 2 օրի. |
| 4 | Կարմիր գլխարկ |
| 5 | Գուլլիվէրը թզուկների աշխրհմ. |
| 6 | Նապաստակի և ոզնու դրաւը |
| 7 | Օբերոնի հրաշալի եղջիւրը |
| 8 | Անվախ գերձակը |
| 9 | Ճշմարտութիւնը միշտ յաղթում է |
| 10 | Լուսերեսիկ |
| 11 | Երեք կատուի պատմութիւնը |
| 12 | Կարմիր գդակ |
| 13 | Կենդանիների աշխարհում |
| 14 | Կարմիր լապտեր |
| 15 | Ընկերասէր փաշանը |
| 16 | Թովմաս եղբօր տնակը |
| 17 | Մրոոան 4 օրինակ |
| 18 | Ի՞նչ է հերիաթը 3 օրին. |
| 19 | Խաչ. Աբովեանի երկերը 3 օրի. |
| 20 | Խև կարապետ |
| 21 | Հայ կինը և հայ երիտսրդ. 2 օրին. |
| 22 | Արիւթեան թևերը 2 օրին. |
| 23 | Հսկայ մրջիւնը |
| 24 | Երեխայրիք |
| 25 | Խժռողներ |
| 26 | Խորամանկ աղուէսը |
| 27 | Հռօ կինը |
| 28 | Գուլ. Ճանապարհորդութիւնը 3 օր. |
| 29 | Փայտաշէն խրճթից մինչև սպիտակ տունը 2 օրին. |
| 30 | Փոքրիկ աստղ |
| 31 | Փոքրիկ լօրդի պատմութիւնը |
| 32 | Ռուսական աշխարհից |
| 33 | Մի կտոր հաց |
| 34 | Արևելեան վիպաշխարհ 2 օրին. |
| 35 | Մարդ առիւծ 2 օրին. |
| 36 | Ընձենաւորը |
| 37 | Հիմնարկութիւն դաւ. ձւսում. |
| 38 | Պատ-ներ թիւրքահայոց կեանքից |
| 39 | Շնիկ 4 օրինակ |
| 40 | Խենթը |
| 41 | Ջալալէդդին 3 օրին. |
| 42 | Կայծեր Ա. հատոր 2 օրին. |
| 43 | Անճոռնի բադիկը 3 օրին |
| 44 | Նամուս |
| 45 | Մանկական թատրոն |
| 46 | Թամար |
| 47 | Բանաստղծթիւններ Ազայեան 3 օր. |
| 48 | Ճանապարհորդ. գորտը |
| 49 | Մուկուչի հաւիկը 2 օրին. |
| 50 | Փայլուն կոպէկ |
| 51 | Անահիտ 3 օրին. |
| 52 | Ոսկի ձկնիկ 3 օրին. |
| 53 | Հետևե՞նք նրան |
| 54 | Գուստաւ Վազա |
| 55 | Հաւատարմ. ամեն արգելք. յաղ-մէ. |
| 56 | Եւանգելինա 2 օրին. |
| 57 | Աբրահամ Լինկօլն 2 օրին. |
| 58 | Ինչո՞վ են ապրում մարդիկ |
| 59 | Պատրիկեանի նամակները |
| 60 | Աբրեցողի մահը 2 օրին. |
| 61 | Իրլանդիայի դատը |
| 62 | Մարդու մը պատմութիւնը |
| 63 | Գիւղական խալիֆայ |
| 64 | Օմուլ |
| 65 | Ջէստէրտօնի ժառանգը |
| 66 | Բը-ա-բա 4 օրին. |
| 67 | Վէպիկներ 2 օրին. |
| 68 | Լուսադէմին 4 օրին. |
| 69 | Դասընկերներ 2 օրին. |
| 70 | Ոսկօկներ 4 օրին. |
| 71 | Խաւարից դէպի լոյս |
| 72 | Երկունք |
| 73 | Աստւած չճանաչող 3 օրին. |
| 74 | Շէն թագաւորի աղջիկը 2 օրին. |
| 75 | Հողածին և անմեռ աշխարհ 3 օրին. |
| 76 | Ծովինար 2 օրին. |
| 77 | Երկասիրութիւններ Քմլեանի 2 օ. |
| 78 | Գալօ Աւօ 3 օրին. |
| 79 | Գէորգ Վաշինգտօն |
| 80 | Մանկական գիրք |
| 81 | Զրոյցներ բնութ. մեծ և աս. երևոյթների մասին 4 օրին. |

| Գրքի հմր. № | |
|---|---|
| 82 | Ջալարիններն արշաւանքը |
| 83 | Զորրորդ մոգը 2 օրին. |
| 84 | Վարդ-Ռեսլին 2 օրին. |
| 85 | Խաչակիր մանուկներ 2 օրին. |
| 86 | Աստղէգրամ, Հարուստ և աղքատ |
| 87 | Նապաստակ |
| 88 | Գրանադայի ջրերը |
| 89 | Մուֆլու |
| 90 | Լուսանման 2 օրին. |
| 91 | Մանկական վէպ |
| 92 | Արծուի մտածմունքը |
| 93 | Նելլօն ու Պատրաշը 4 օրին. |
| 94 | Անտառապահը 3 օրին. |
| 95 | Առաջին փիշտ 2 օրին. |
| 96 | Աշխէնն ու Մարգարիտը 4 օրին. |
| 97 | Գիւղական վարժուհի 3 օրին. |
| 98 | Ակամայ մարդասպան 2 օրին. |
| 99 | Անզամալոյծ 3 օրին. |
| 100 | Ղեկավարներ 2 օրին. |
| 101 | Սամիտարնի 3 օրին. |
| 102 | Իմ դատիրկութ. և հ. ծառայելը 2 օ. |
| 103 | Խնձորենիների երկրում 2 օրին. |
| 104 | Երկու եղբայր 2 օրին. |
| 105 | Ռօբինզօն 3 օրին. |
| 106 | Ռօբինզօն (համառօտ) 2 օրին. |
| 107 | Հազարից մէկը 4 օրին. |
| 108 | Քսան վէպիկներ ու զրոյցներ |
| 109 | Լուեյի Սաքօն 2 օրին. |
| 110 | Ընտիր պատմուածքներ |
| 111 | Հայ գիւղացու սև օրը 2 օրին. |
| 112 | Այծարած Մօնի |
| 113 | Երեխաները և նրանց բարեկ-ները |
| 114 | Ակոէա |
| 115 | Երկու քոյր 2 օրին. |
| 116 | Ռէյնէկէ աղուէսը |
| 117 | Գոռող արմաւենին 2 օրին. |
| 118 | Գոռող Ազգէն |
| 119 | Գիւղական աղքատ 3 օրին. |
| 120 | Մեծապատիւ մուրկաններ 2 օրի. |
| 121 | Ծաղիկ և պտուղ 3 օրի. |
| 122 | Կօշկակարը երաժիշտ 3 օրին. |
| 123 | Նաւի փորրաւորը |
| 124 | Դարվինիզմ 2 օրին. |
| 125 | Անհանգիստ գիշեր |
| 126 | Թզուկ 2 օրին, |
| 127 | Վայրի կարապներ 2 օրին. |
| 128 | Աղքատութեան սանդուխքը |
| 129 | Թասիր |
| 130 | Մատանի, Թուշնիկ |
| 131 | Շառատ 3 օրին. |
| 132 | Ձինական առասպելներ |
| 133 | Մայրական սէր Օստրագօրսկու |
| 134 | Կենդ. բնազդն ու հասկացողու-թիւնը 2 օրինակ |
| 135 | Ոսկի շինողներ 4 օրին. |
| 136 | Իդեալիստ ծածան 4 օրին. |
| 137 | Ենիչերի 2 օրի. |
| 138 | Մոռացկոտ ուխար 2 օրին. |
| 139 | Աներևոյթ հողագործ |
| 140 | Լինհարդ և Գերտրուդ 2 օրին. |
| 141 | Փաշան հովիւ |
| 143 | Սոխակ 2 օրին. |
| 143 | Փարոսի վրայ |
| 144 | Երևելի մարդիկ 2 օրին. |
| 145 | Կօնրադ Վալլենրոդ 3 օրին. |
| 146 | Ժլատ Սկրուջը 2 օրին. |
| 147 | Արձակ բանաստեղծ. Տուրգենեվ |
| 148 | Վարժուհու երազը 2 օրին. |
| 149 | Վիլ-հելմ Թելլ (Լամարդինի) |
| 150 | Խան-Միրան |
| 151 | Ալպիններից մինչև Անդերը 3 օ. |
| 152 | Օրլէանի կոյսը 2 օրին. |
| 153 | Ցուգայի վերջին գիշերը |
| 154 | Գետնափորի երեխաները |
| 155 | Ծաղկահատութեան հնարողը |
| 156 | Տպագրութեան հնարողը |
| 157 | Ջարա 2 օրին. |
| 158 | Գիւղի սուրբը |
| 159 | Արջերը |
| 160 | Կեանքի դպրոցը |
| 161 | Կենդանի թաղւած |
| 162 | Եղբայրը եղբօր դէմ 3 օրին. |
| 163 | Պայվայ մանուկը |
| 164 | Ջինւոր Ցակովլէ |
| 165 | Վրէժ և հիւանդապահ աղջիկ 2 օ. |
| 166 | Մահմեդի կեանքը |
| 167 | Ուրբինօյեցի մանուկը 2 օրին. |
| 168 | Օնիկն ու Մարգարիտը |
| 169 | Կնգերիչ 2 օրին. |



| Գրքի հմր. № | |
|---|---|
| 170 | Գոհարիկն ու Աստղիկը 3 օրին. |
| 171 | Աղքատի բախտը 4 օրինակ |
| 172 | Նահատակը 2 օրին. |
| 173 | Ծննդեան պատմութիւնը 2 օրին. |
| 174 | Գէորգ Կրարր |
| 175 | Երկրաշարժ և հրրուխ-ին լեռն. 2 օ. |
| 176 | Փարաւոնի աղջիկը 2 օրին. |
| 177 | Բէաթրիչէ |
| 178 | Զրոյցներ հողի մասին |
| 179 | Երկրի և երկնքի մասին 2 օրին. |
| 180 | Կովկասի գերի 2 օրին. |
| 181 | Ծերունի Մարկօն 3 օրին. |
| 182 | Նօնցայի բերդը |
| 183 | Թուչ. աշնանային տեղափոխ-թիւնը |
| 184 | Տարաս Բուլբա 3 օրին. |
| 185 | Դաւիթ կօպպերֆիլդ |
| 186 | Սիրտ |
| 187 | Բենիամին Ֆրանկլին |
| 188 | Հերիաթներ |
| 189 | Նալ և Դամայեանթի 4 օրին. |
| 190 | Խուն-խոր |
| 191 | Կայենի կտակը 2 օրին. |
| 192 | Հայրը և որդին |
| 193 | Տարասկօնցի Տարտարէնը 3 օրին. |
| 194 | Կալեռ 2 օրին. |
| 195 | Գթութեան քոյր 2 օրին. |
| 196 | Պստիկ է, բայց չստիկ է 2 օրին. |
| 197 | Ընտանիքի լոյսը 3 օր. |
| 198 | Թովմաս Բօցարիս 2 օրին. |
| 199 | Աստծ. գիտէ արդրն. ու մեղ-րը 3 օր. |
| 200 | Փունջ Բ. հատոր |
| 201 | Երրորդ ոսկի 2 օրին. |
| 202 | Գործակատարի յիշատակարանից |
| 203 | Մեղուներ 4 օրին. |
| 204 | Ընտանի կենդանիներ |
| 205 | Երկրաշարժ և հրաբուղխ |
| 206 | Մրցող պատգամաւորներ 4 օրին. |
| 207 | Թուղթ և հին գրքեր |
| 208 | Մուսինի գանգատը |
| 209 | Լիր արքայ |
| 210 | Փայլակ 3 օրին. |
| 211 | Տիրօլացի աղջիկ 2 օրին. |
| 212 | Որսի գնդակ 2 օրին. |
| 213 | Պիաստրա Արսա |
| 214 | Ջուր լոյսեր |
| 215 | Մրցումն |
| 216 | Գայլ 2 օրին. |
| 217 | Ընկեցիկը |
| 218 | Բարեկամութեան պոհեր |
| 219 | Բանաստեղծ. Ց. Ցովհաննիսեանի |
| 220 | Արուեստն և Մանուէլ Ա. հտ. 2 օր. |
| 221 | Արուեստն և Մանուէլ Բ. » » օր. |
| 222 | » » » Գ. » » օր. |
| 223 | Ժանբատիստ Լիւլլի 2 օրէր. |
| 224 | Սարկաւագ 2 օրին. |
| 225 | Մենաքմ. Գամաղացու պատմ. 2 օր. |
| 226 | Վիլհելմ Թելլ 2 օրին. |
| 227 | Ոսկէ ասեղներ » » |
| 228 | Բուլղար աւազակապետը 2 օրին. |
| 229 | Դօնչօ |
| 230 | Նեգա 3 օրին. |
| 231 | Ուրիշի գերեզմանի վրայ առանց արտ. լաց լինում 3 օրին. |
| 232 | Բաբա Առաքել ու պատմ-նը 4 օրի. |
| 233 | Փոքրիկ լոտես 3 օրի. |
| 234 | Բէլա 2 օրին. |
| 235 | Երկու մանրավէպ |
| 236 | Արծուի դատաստանը 2 օրին. |
| 237 | Հնդու աքաղաղ |
| 238 | Բարի Հայկանուշը » » |
| 239 | Կենդանի մեռածներ 3 օրին. |
| 240 | Տանուտէր Օհանը |
| 241 | Ոսկի բզէզ |
| 242 | Խօսող կաղնի |
| 243 | Պառաւ Տօնկա |
| 244 | Սպարտակ |
| 245 | Ջօրջ Ստեֆենսօն 2 օրինակ |
| 246 | Ակն ընդական |
| 247 | Ֆրանս-պրուսական պատերազմ |
| 248 | Պատկերներ վասպ. Հ. կեանքից |
| 249 | Դրախտի բնաանիքը 4 օրինակ |
| 250 | Սիրաք և Սամուէլ 3 օրինակ |
| 251 | Լաֆօնտենի առակներ 2 օրինկ. |
| 252 | Սօս և Վարդիթեր |
| 253 | Սկիզբն երկանց |
| 254 | Հայաստանի սովը և Էջմիածինը |
| 255 | Գիւղացի Պետօն |
| 256 | Վարսենիկ 2 օրինակ |
| 257 | Աշխատութեան ոսկէ հետևանք-ը |

ՊԵՏ. ԼՈՒՆ. ՋՐԻ ... Гос. Публ. Библиотека ... ՀԱՅԿ. ССРА

| Հմր. | | | |
|---|---|---|---|
| № | | 302 | Կոլումբոսը և Ամերիկայի գիւտը |
| 258 | Անյաղը | 303 | Վարդագոյն ամպ |
| 259 | Խաթ-սարա | 304 | Գալի՞ս է արդեօք 4 օրին. |
| 260 | Հանրամատչելի Բնախօս. 3 օրի. | 305 | Թշուառ Լիզա |
| 261 | Քիմիա 2 օրին. | 306 | Եւանգելինա (Համառօտ) 2 օրին. |
| 262 | Հիւանդսէր 4 օրին. | 307 | Ցիլլոնի կալանաւորը |
| 263 | Ջէյթուն 2 օրին. | 308 | Վահան Մամիկոնեան 2 օրին. |
| 264 | Թաթախման գիշեր 2 օրին. | 309 | Բանաստեղծ. Գ. Քաթիպա 2 օրին. |
| 265 | Ազնիւ խօսք | 310 | Կոտրուած սիրտ |
| 266 | Խաչագողի յիշատակ. Ա. հատ. 2 օ. | 311 | Երգեր ու վէրքեր 3 օրին. |
| 267 | " " Բ. " 2 օ. | 312 | Աղբիւր 1887 թ. 12 համարները |
| 268 | Ոյժեր 3 օրին. | 313 | Կայծեր Բ. հատոր և վերջ |
| 269 | Ընտիր երկաս-ներ Ա: հ. Ռ.Պատկ. | 314 | Ցո՞ երթաս |
| 270 | Գալիա | 315 | Եօթն ագռաւ 2 օրին. |
| 271 | Երկու վէպիկներ և ոտանաւորներ | 316 | Անդարդ Հանէսը 3 օրին. |
| 272 | Երեխաները | 317 | Պատիկ ու Ճատիկ 4 օրին. |
| 273 | Գուստաւ վազա (Համառօտ) 2 օր. | 318 | Կարէնն ու Մանէն 2 օրին. |
| 274 | Հոսհոսի ձեռատետր | 319 | Խարալի տղայ |
| 275 | Բանաստեղծ. Բալուղեանի | 320 | Մանչուկն ու Կուտիկը |
| 276 | Սասունցի Օհան | 321 | Ջամբիեղ |
| 277 | Բալկան Լեգենդա | 322 | Շիլլոնի կալանաւորը |
| 278 | Եզիդ. աղջիկը | 323 | Արնագին 2 օրին. |
| 279 | Ի՞նչ է կայծակը 3 օրին. | 324 | Հզօր Սամսոն 3 օրին. |
| 280 | Իսլամ | 325 | Արութիւն և Մանուէլ 3 հտր. 2 օր. |
| 281 | Ի՞նչ է խօսում սենեակը | 326 | Արեգակի և լուսնի խաւարումն |
| 282 | Գարիբալդի | 327 | Մանկութ. և պատան. Լ. Տոլս. 2 օր. |
| 283 | Ալրայիլ | 328 | Դժբախտ կին 2 օրին. |
| 284 | Զրոյցներ | 329 | Հանրիէտ |
| 285 | Երկու հեքիաթ 2 օրին. | 330 | Մարդ եմ |
| 286 | Երեխաների կեանքից 2 օրին, | 331 | Երկու ողի |
| 287 | Սոկրատէս | 332 | Քոռ-Եղիկ |
| 288 | Գիւլլէ | 333 | Բերսաւ Ռոարելը |
| 289 | Վերադարձրած յանցաւորը | 334 | Ժառանգները |
| 290 | Մեծը 3 օրին. | 335 | Ճխնոյ 2 օրին. |
| 291 | Գիւղի շուրջը 2 օրին. | 336 | Թուլումբաչիներ |
| 292 | Վիշապ 2 օրին. | 337 | Ուսենց Յովսէփը 2 օրին. |
| 293 | Հայրենասէր տիկին 2 օրին. | 338 | Գառնուկ ու լուսատնիկ |
| 294 | Հաջի Դիմիտրի և Ստեփան Կարաջա | 339 | Կիլիկիա |
| 295 | Շամիլի դատաստանը | 340 | Երկու վաճառականներ |
| 296 | Ալօ-Մարուն 2 օրին. | 341 | Հետաքրքիր աղջիկ 2 օրին. |
| 297 | Թոփալ 2 օրին. | 342 | Պապիկ և Թոռնիկ |
| 298 | Բերլինի պաշարումն | 343 | Լեոնի վիշտը |
| 299 | Խօլերա բժ. Տէր Գրիգորեանի | 344 | Բարեբարութ. այսպէս պէտքէ 2 օ. |
| 300 | Մանուկն Արտաւազդ 2 օրին. | 345 | Հայրս 2 օրին. |
| 301 | Վերջին դաս 2 օրին. | 346 | Ի՞նչպէս պէտք է ապրել |



| Գրքի հմր. | | | |
|---|---|---|---|
| № | | 391 | Կլօդ Գեօ |
| 347 | Ծայրեր 3 օրին. | 392 | Պատեօր 2 օրին. |
| 348 | Թաւամազ մեղու | 393 | Աղ գային Ջօջեր |
| 349 | Իմ կեանքի գլխաւոր դէպքերը 2 օ. | 394 | Մցերի |
| 350 | Գիւղում 3 օրին. | 395 | Եան Հուս 2 օրին. |
| 351 | Ընդհանրական ներումն 2 օրին. | 396 | Փորձանքների բժշկարան 3 օրին. |
| 352 | Վէպիկներ և պատկերներ Ա. հատ. | 397 | Գլադստոն |
| 353 | " " Բ. " | 398 | Ուղ. գործնկն. Հերմպհ-թեան 2 օ. |
| 354 | Առանց Դաւանանքի | 399 | Քուրդի լեառն |
| 355 | Հայ բօշաներ | 400 | Շիլլոնի կալանաւորը Բայրոնի |
| 356 | Թէոդորոս Ռշտունի | 401 | Թշուառների բրեկմ. բժ. Հապղ 2 օ. |
| 357 | Նամակ Յիսուսին | 402 | Օդը և կեանքը |
| 358 | Բարեկամներ | 403 | Պատանեկան յուշեր |
| 359 | Ջէյթունի անցեալէն ու ներկայէն | 404 | „Լրտեստղան" և Միլիւշինի ընծ. |
| 360 | Քար-Սիրտ 2 օրին. | 405 | Միքէլ Աղենց Արդիւը |
| 361 | Հեղինէ Բ. մասը 2 օրին. | 406 | Դիօգինէս |
| 362 | Հեղինէ Ա. և Բ. մասեր | 407 | Իգնատիոս Լոյոլա |
| 363 | Խամսայի Մելիքութիւնները | 408 | Կոնֆուցիոս |
| 364 | Արսէն Դիմաքսեան | 409 | Պասկալ 3 օրին. |
| 365 | Կրակ | 410 | Բուդհա |
| 366 | Տաճկահայք | 411 | Հանրամատչելի աստղաբաշխ. |
| 367 | Վանայ սաղ Ա. մաս | 412 | Բարակացաւ-թոքախտ |
| 368 | " " Բ. " | 413 | Կենդանի՞ է արդեօք |
| 369 | Կեանքի դպրոցը (ընդարձակ) | 414 | Տաճիկ փաշա |
| 370 | Դաւիթ և Մհեր | 415 | Կապիտանի աղջիկը |
| 371 | Դաւիթ և Մհերի քննադատութ-ը | 416 | Աշխարհի թագուհու դատաստ. 2օ. |
| 372 | Գր. Լուսաւորիչ և իր որդիքը 3 օ. | 417 | Մարօ |
| 373 | Տաւար պահելու կերպը | 418 | Պատկերներ իրական կեանքից |
| 374 | Փեսայ որսողներ | 419 | Վերջին վէրքեր |
| 375 | Նոր ճանապարհի վրայ | 420 | Արարատի գլուխը ճանապրհ-թիւն. |
| 376 | Ցաւագարը | 421 | Համ. պատմ. Ներսիսեան դպ. 2 օ. |
| 377 | Վեհափառ Հայրիկը 2 օրին. | 422 | Պատկերներ կեանքից |
| 378 | Կեանքի գծեր | 423 | Կանանց ներկայ դրութեան մասին |
| 379 | Գիւղական փաստաբանը | 424 | Հայ ժողովրդական հեքիաթներ |
| 380 | Կեանքի տեսարաններ | 425 | Բէպպօ |
| 381 | Լեռան աղջիկը | 426 | Հրէայ Արները |
| 382 | Ալ-Բուլատ | 427 | Պապի ջորին |
| 383 | Պետրոս Դուրեան | 428 | Տժգոյն հովւերգութիւն |
| 384 | Սկեսուրը | 429 | Ջիսսիկայի առաջի աղօթքը |
| 385 | Անձրև և ձիւն | 430 | Սպանուած հայրը 2 օրին. |
| 386 | Աքցիվչէ | 431 | Մայրական սէր |
| 387 | Նա | 432 | Բաշօն 2 օրին. |
| 388 | Սասունցի Դաւիթ | 433 | Մութ խորշերից |
| 389 | Երիտասարդ անգլիացին | 434 | Պատմուածքներ Զերբեր. կեանքից |
| 390 | Տեղագրական նամականի 2 օրին. | 435 | Խղճով դատաստան 2 օրին. |

| գրքի հմր. № | |
|---|---|
| 436 | Իւլեանկա 4 օրին. |
| 437 | Գալիլէյ 3 օրին. |
| 438 | Պուշկին 2 օրին. |
| 449 | Հ. բացիոս |
| 440 | Խաբուսթեան և օդի մասին |
| 441 | Պօղնանի ուսուցչի օրագրից 2 օր. |
| 442 | Մեր պապի գաւազանը |
| 443 | Փայլուն բղէզ 3 օրին. |
| 444 | Լիր թագաւոր |
| 445 | Բանաստեղծը և հերոսը |
| 446 | Ցովհաննէս Հուս |
| 447 | Հարստութեան աւետարան |
| 448 | Պանդուխտ |
| 459 | Ցրինի |
| 450 | Կոյրի աղջիկը 2 օրին. |
| 451 | Ի՞նչ բան է ժանտախտը |
| 452 | Գէորգ Ստեֆենսօն |
| 453 | Մեծ քոյրը |
| 454 | Նրա մայրը |
| 455 | Համարձակ Բոբբին |
| 456 | Բերանժէի կեանքից |
| 457 | Պօլկօվնիկ Փրից 2 օրին. |
| 458 | Հայրիկի Կաթուղիկ. ընտրութիւնը |
| 469 | Եանկօ երաժիշտը |
| 460 | Արդար ծերունի |
| 461 | Եասի արկանները 4 օրին. |
| 462 | Զարմանալի որդ 3 օրին. |
| 463 | Սանթօ |
| 464 | Խնամատարութ. առողջ երեխ. 2 օ. |
| 465 | Այց Թիւրքաց Հայաստանի |
| 466 | Կուածաղիկ |
| 467 | Մագնիսականութիւն 4 օրին. |
| 468 | Մաքսիմկա 4 օրին. |
| 479 | Դիֆտերիտ 2 օրին. |
| 470 | Գաղափարական քաղանայ |
| 471 | Աշակերտի առողջապահ-նը 3 օր. |
| 472 | Խելագարի յիշատակարանը 2 օր. |
| 473 | Քնար Պուշկինի |
| 474 | Ռուշան և Հիւրիզատ |
| 475 | Դաստ. մտաւոր բարոյ. և ֆիզիք. |
| 476 | Ոսկի աքաղաղ 2 օրին. |
| 477 | Խրիմեան Հայրիկ, Մալումեանի |
| 478 | Վարժարանը պարբոտաց. միջոցներ |
| 479 | Փշրանք |

| | |
|---|---|
| 480 | Գոեհիկը |
| 481 | Միսիօնար Հայր Դամեան Վէյստրի կեանքը |
| 482 | Մի տօն օր Կովկասում |
| 483 | Վեհափառ Հայրիկին |
| 484 | Վարդանանց տօնը |
| 485 | Խօլերա Վաչան Արծրունու |
| 486 | Շիրվանի կոյսը |
| 487 | Ամուսնած. կնոջ ներկայ դրութ-ը |
| 488 | Մասիս լեռ. հարաւային ստորոտն. |
| 489 | Ձայն բարբառոյ Հայ. վան. առ հայս |
| 490 | Խօլերայի մասին 3 օրին. |
| 491 | Աղա սուրբ Սարգիսը |
| 492 | Համով Հոտով |
| 493 | Մանուկների հոգատարութիւնը |
| 494 | Դեռահաս. ազատ ընթերցանութ-ը |
| 495 | Աղատութեան մասին 2 օրին. |
| 496 | Վէպ թէ պատմութիւն, Լէօյի |
| 497 | Արծիւ Վասպուրականի |
| 498 | Գր. Արծրու. 25 ամեայ գործուն-ը |
| 499 | Րաֆֆիի „Կայծերը", Հայկունու |
| 500 | Քաօս |
| 501 | Մանուկների մարմ. գործարն. 2 օ. |
| 502 | Պանդուխտի Ցիշատակարանից |

2

Ուսուցչական գրադարան

| գրքի հմր. № | |
|---|---|
| 1 | Братская помощь Армянъ |
| 2 | *) „Журналъ для всѣхъ" 1900 № 1-12 |
| 3 | „Փորձ" 1877-78 թ. № 1, 3, 4. 1879 թ. № 4. |
| 4 | Альбомъ картинъ по зоол. млек. |
| 5 | „Աղգագրկ. հանդէս" 1895 թ. № 1 |
| 6 | „Արարս" 1892 թ. Ա. և Բ. |
| 7 | „Մուրճ" 1889 թ. № 1-12. |
| 8 | „Արարս" 1890 թ. Ա. և Բ. գրքերը |
| 9 | „ 1893 թ. Բ. գիրք |

*) Ցիշեալ ամսագիրը ստացւում է այս տարի.



| գրքի հմր. № | |
|---|---|
| 10 | Армянскіе белетристы т. I |
| 11 | **) „Մուրճ" 1901 թ. № 1-5 |
| 12 | Մինն այսպէս միւսն այնպէս |
| 13 | Բագրեանդ. Ջրարբաշխ գաւառ |
| 14 | Ջահրումար |
| 15 | Արդարադատ աղջիկը |
| 16 | Հին ցաւ 2 օրինակ |
| 17 | „Վարժարան" 1883 թ. № 6 |
| 18 | Կոխլովի առակները |
| 19 | Մանկական աշխարհ |
| 20 | Հ. պատմութիւն Չերքեզեանի 2 օ. |
| 21 | Արեւելեան ազգերի հին պատմ-նը |
| 22 | Հասարակութեան դատստնին. 2 օ. |
| 23 | Թւաբանութիւն Վարձելեանի |
| 24 | Կենսագրութիւն Թաղիադեանի |
| 25 | Моимъ любимцамъ |
| 26 | Ընդարձակ իրագիտութիւն |
| 27 | Ժողովրդի կրթական գործը մեզնմ. |
| 28 | Զօրանն ու նշանածը |
| 29 | Երգեր ու բանաստեղծութ. Սրինգ. |
| 30 | Стихотворенія Кольцова |
| 31 | Ծաղկաքաղ շրջան Գ. |
| 32 | Քաջ Վարդան Մամիկոնեան |
| 33 | Մի կտոր Լուսաւորչական Հ. հետ |
| 34 | Հոմերի Իլիականը |
| 35 | Հոմերի Ոդիսիականը |
| 36 | Հ. պատմութիւն, Պալասանեան |
| 37 | Առտնին տնտեսութիւն 5 օրինակ |
| 38 | Эмма |
| 39 | Էլ գուջա |
| 40 | Учебникъ Неорганической химіи |
| 41 | Краткая Нѣмецкая грамматика I часть |
| 42 | Краткая Нѣмец. грамм. II ч. |
| 43 | Առակագիրք Բաղամթրեանի |
| 44 | Ի՞նչ է սիֆիլիսը 2 օրինակ |
| 45 | Դաստիարակ մանկանց |
| 46 | Битва русскихъ съ Кабардинц. |
| 47 | Համառ. պատմ. Հ. մինչև մեր օրերը |

**) Մուրճ ամսագիրը ստացւում է այս տարի.

| | |
|---|---|
| 48 | Մրցումն հաս. դէմ (թերթ. պկս) |
| 49 | Մանկավարժական նամակները Երն. Բեօմէի |
| 50 | Нива, сборникъ |
| 51 | Միակնութ. և բազմակնութիւն 2 օ. |
| 52 | Կի՞ն թէ Վագր |
| 53 | Сусланъ и Людмила |
| 54 | Նոր կտակարան Ցիսուսի Քրիստ. ի. |
| 55 | Истор. и совр. полож. Ар. женщ. |
| 56 | L'art dénsliger et détudier les langaess |
| 57 | Langage objectif Les Séries chempêtres et volantes |
| 58 | Langage subjectif ou organe de la couversation |
| 59 | Langage objectif les Séries domestigues et champêtres |
| 60 | Ալմաստ (մի քանի թերթ պակաս) |
| 61 | Մեր ուսուց. ընկեր. Նւէր |
| 62 | „Հիւսիսափայլ" 1861 թ. № 6 |
| 63 | Դեօլինգերի նամակները |
| 64 | Կորիւն վարդապետ |
| 65 | Քրիստոնէական վարդապետութ. |
| 66 | Նումա Պոմպուլիոս |
| 67 | Ցար. Արարատեանի կեանքը |
| 68 | „Սոխակ" երգարան |
| 69 | Պարտք Սմայլսի |
| 70 | Ծրագիր Հայազգագրութեան |
| 71 | Հայերէն կրդլ.-գրել սովոր. հրհնգ. |
| 72 | Աշխարհաբարի Քերականութիւնը |
| 73 | Հայաստ. եկեղ. և բիւզդ. ժող. 2 օ. |
| 74 | Հոգի և մարմին 5 օրինակ |
| 75 | Սիրոյ ուխտաւորը |
| 76 | Ազգարն. և ազգարնակչ. շարժում. |
| 77 | Ներքին կեանք Հին Հայաստանի |
| 78 | Թիւրք. Հայերի տնտես. դրութ-նը |
| 79 | Թւաբանութիւն (ուսանող. հրատ.) |
| 80 | Համառ. ցուցմունքներ դասնդման. |
| 81 | Գործնական խրատներ |
| 82 | Պատմ. Ս. Գէորգայ զօրավարին |
| 83 | Հիւսւածք Հ. հին մատենագրների |
| 84 | Ժամանակ և խորհուրդ իւր |

Երբի հմր.

№

85 Առաջին ընթերցարան պատկ-վարժ.
86 Համառ. դաս. Աշխարհագրութեան
87 Ազգայնութ. և նրա պրինցիպները
88 Բանաստեղծութիւններ Մոձոռենի.
89 Վարդանի և հայոց պատերզմ. հմր.
90 Իմ հայրապաշտ ընկերը
91 Մարգարիտ արքայութեան երկնից
92 Армяне въ V-омъ вѣкѣ
93 Ջաւախքի բուրմունք
94 Վանայ սաղ Ա. մասն
95 Դաւիթ բէգ (գրաբար)
96 Համառ. ընդհ. պատմ Ա. մասն
97 „ „ „ Բ. մասն
98 Միջին դարու պատմ. Բ. մասն
99 Պատմութիւն Մծին Աղէքսանդրի
102 Правила препод. глухо-нѣмымъ
103 Феодоръ Петровичъ Гаазъ
104 Очерки изъ исторіи и народ. сказаній
106 Современное Армянское Общес.
109 Общедоступная гигіена
112 Несостоятельность научн. матер.
114 Шекспиръ и его трагедіи 2 օր.
154 Игры, занятія и опыты для дѣтей

Ա.

Ռուսերէն մանկակն. գրքերի բաժ.

100 Аленушкины сказки
101 Сказка о пчелѣ махнаткѣ
105 Бесѣды о природѣ
107 Сегодня или никогда!
108 Пшеница или солома!
110 На походъ (Родина)!
111 Береженнаго Богъ бережетъ
113 Перекличка
115 Учительница
116 Разсказы для маленькихъ дѣтей
117 Пѣсня про купца Калашникова

118 Майская ночь
119 Упустишь огонь не потушишь
120 Свѣчка
121 Сказка о конькѣ Горкункѣ
122 Народный поэтъ Ив. Совичъ
123 Соловиная пѣсня
124 Францискъ Ассизскій
125 Какъ ухаживать зо огородомъ
126 Два старика 2 օրին.
127 Скупой рыцарь
128 Кавказскій плѣнникъ

Բ. Թատրոնական բաժին

129 Ռուզան 2 օրինակ
130 Արշակ Բ.
131 Մակբէթ
132 Նկարիչներ
133 Բեխերով կին
134 Ջաղացպան
135 Հայդուկներ կմ. Ֆրէյգոն աւապակ.
136 Խուլեր
137 Преступница
138 Երկու քաղցածներ
139 Կնիկս լաց ըլեմ թէ փուլերս
140 Ջէնը սիրէլտար
141 Ողբերգութիւն Արէլի
142 Սիրահարը սեղանի տակ
143 Սխալ հաշիւ (պատկերով)
144 Կըռթ-կըռթ 2 օրինակ
145 Դօկտոր Շտօկման
146 Երևակայական հիւանդ 2 օրինակ
147 Կեղծ ալնւուհիք
148 Պէպօ
149 Օսկան Պետրովիչն էն կենքումը
150 Թագի համար
151 Գիշերւայ սաբրը խեր է
152 Первый винокуръ
153 Василиса Марковна
156 Մկնիկը

---



Գրքի հմր.

№

Յաւելւած *)

155 „Արաքսի“ Ալբոմը
157 Атласъ Шуберта „Міръ Животныхъ“
158 Բժ. Ս. Շահնազարեանի „Մշակը“
159 Краткое пособіе къ чтенію плановъ и картъ
160 „Լումայ“ 1900 թ. № 1
161 Հայկական Նշանագրեր
162 Учебникъ Всеобщей географіи
163 Հանրամատչելի բժշկարան
164 Ձինւորագր. Կանոնագրութիւն
165 Гимнаст. игры
166 Paul et Virginie
167 Учеб. начальн. Географіи I
168 Всеобщ. Географія III
169 Географ. курсъ II, Янчинъ
170 „ „ III „

*) Յաւելւածի տակ դանւած գրքերը յետոյ են աւելացել։

Հարկաւոր բացատրութիւն. — Գրադարանիս բոլոր գրքերը կրումն իրանց վրայ կնիք հետեւեալ վերտառութեամբ. — „ԼԻԼԱԻԱՑԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ“ Թաւրիզ 1898 թ.

171 Մանկատածութիւն
172 Փաւստոս Բիւզ. Գելցէր
173 Գութան № 1, 2, 1901 թ.
174 Домашнія животныя
175 Умств. и нравств. развитіе дѣтей.
176 Մանկական խաղեր
177 Քահանայական խնդրի շուրջը
178 Географія курсъ I, Янчинъ
179 Հանրահաշիւ, Մուրադեանց
180 Сбор. Алгебр. задачъ I часть
181 „ „ „ II „
182 Геометрія
183 Հայկական Մօնօգրամներ
184 Թիւրք. Հայ. և իրենց դրացիներ
185 Դասագիրք եկեղեց. Ձայնագրութ.

Աշակերտական բաժնում կայ 823 կտոր գիրք.

Ուսուցչականում 310 կտոր.

Բոլորը միասին գրադարանում կայ 1033 կտոր գիրք։

Գրադարնպետ. Արշ. Մեհրաբեան

1 Յունիս 1901 Թաւրիզ

Ի դիմաց մանկավարժական ժողովի Տեսուչ Տիգրան Ռաշմաճեան